ՀՀ ՎԵՑԵՐՈՐԴ ԶԵԿՈՒՅՑԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՄ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 16-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում է խարտիայի սկզբունքների կատարման և խարտիայի դրույթների իրականացմանն ուղղված միջոցառումների ընթացքի, Հայաստանում Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կիրառման վերաբերյալ փորձագետների կոմիտեի իրականացված գործնական քայլերի վերաբերյալ վեցերորդ զեկույցը:

ՄԱՍ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը՝կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծննդից, հաշմանդամությունից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: Համաձայն Սահմանադրության 56-րդ հոդվածի Յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունք: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք:
2. Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Եվրոպական Խարտիան տարածաշրջանային փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ (այսուհետ՝ Խարտիա) 2001թ. մայիսի 11-ին և ի պահ ներկայացրել իր վավերացման փաստաթուղթը 2002թ. հունվարի 25-ին: Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան վավերացվել է Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի կողմից 2001 թվականին: Այն ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի մեկից:
3. Համաձայն խարտիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ նույն փաստաթղթի իմաստով Հայաստանի Հանրապետության փոքրամասնությունների լեզուներ են ասորերենը, եզդիերենը, հունարենը, ռուսերենը և քրդերենը:
4. Համաձայն խարտիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան կիրառել ասորերենի, եզդիերենի, հունարենի, ռուսերենի և քրդերենի նկատմամբ:
5. «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում երաշխավորում է ազգային

փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը:

6. Հայաստանում 2003 թվականին ընդունվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (փոփոխվել է 2016թ.՝ հանդիսանալով ՀՀ սահմանադրական օրենք), որի հիման վրա ձևավորվել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը:
7. Հրապարակվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդումը[1]: Հաղորդման շրջանակներում վեր են հանվել նաև ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց լեզվի պահպանման իրավունքին վերաբերելի խնդիրները և դրանց հաղթահարման առնչությամբ ներկայացվել են համապատասխան առաջարկներ:

Խ ա ր տ ի ա յ ի Հ ո դ վ ա ծ 7

Նպատակներ և սկզբունքներ

Կետ 1

ա) տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ճանաչումը որպես մշակութային հարստության արտահայտություն,

Ազգային փոքրամասնությունների վերաբերյալ ընդհանուր պատկերը ՀՀ-ում

8. 2022 թվականին կատարված մարդահամարի տվյալներով՝ Հայաստանում ազգային փոքրամասնությունների ընդհանուր թիվը կազմել է 56.489 (2011թ.՝ 56953) մարդ: Նրանց մեծամասնությունը՝ 31 079 մարդ կամ ոչ հայազգի բնակչության 55 տոկոսը կազմել են եզդիները (2011թ.՝ 35 308 մարդ, կամ Հայաստանի ոչ հայազգի բնակչության մոտ 62 տոկոսը): Հայաստանի Հանրապետության բնակչության ազգային կազմը 2022 թվականի մարդահամարի տվյալներով՝ ըստ ազգության, սեռի և տարիքի, մայրենի լեզվի և ՀՀ մարզերի/ք.Երևանի բաշխումով՝ ներկայացվում է Հավելված 1-ում:
9. ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1149-Ն որոշմամբ հաստատված 2022 թ. ՀՀ մարդահամարի ծրագրի (հարցաշարի) համաձայն՝ տնային տնտեսության անդամների ազգության, մայրենի և այլ լեզուներ տիրապետելու վերաբերյալ հարցերն իրենց բնույթով եղել են «բաց», այսինքն հարցաթերթի հարցերին տրված պատասխաններն ամփոփվել են գրասալիկում (պլանշետում) ներբեռնված ազգությունների ցանկին (Ազգությունների կոդավորման ձեռնարկ) համապատասխան: Մայրենի և այլ լեզուներ տիրապետելու հարցերի պատասխանների ամփոփման համար կիրառվել է գրասալիկում ներբեռնված՝ «Լեզուների կոդավորման ձեռնարկով» սահմանված ցանկը:

   Ըստ ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքների, երկրի բնակչության 1,89 տոկոսն են կազմել ազգային փոքրամասնությունները, իսկ 2022 թ.-ի՝ 1,93 տոկոսը: ՀՀ 2011 և 2022թթ. ազգային կազմի և մայրենի լեզվի վերաբերյալ հարցադրումները կրել են կամավոր բնույթ, հնարավորություն ընձեռելով պատասխանողին ըստ ցանկության նաև հրաժարվել նշված հարցերին պատասխանելուց: Այսպես, ՀՀ 2022 թ. մարդահամարի արդյունքներով՝ 545 մարդ հրաժարվել է պատասխանել ազգության, 2 129 մարդ՝ մայրենի լեզվի, 11 669 մարդ՝

[1] https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf :

այլ լեզուներ տիրապետելու մասին հարցերին (ՀՀ 2011թ. մարդահամարին՝ 100 մարդ հրաժարվել է պատասխանել ազգության և 29-ը՝ մայրենի լեզվի հարցերին):

10. Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետությունում կազմակերպված գործում են 11 էթնիկ համայնքների շուրջ 50 հասարակական կազմակերպություններ, որոնց աշխատանքների մի մասն ուղղված է նաև իրենց մայրենի լեզուների պահպանությանն ու զարգացմանը: Ասորական, եզդիական, ռուսական, հունական, քրդական էթնիկ համայնքներից բացի, ակտիվորեն գործում են ուկրաինական, հրեական, լեհական, վրացական, բելառուսական, գերմանական էթնիկ համայնքների հասարակական կազմակերպությունները: Հայաստանում գործում են ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների միություններ, ասոցիացիաներ, որոնք միավորում են տարբեր էթնիկ համայնքների հասարակական կազմակերպությունները:
11. Նախկին գումարման խորհրդարաններում 2017 թ. արդեն իսկ գործող և 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքներով ձևավորված խորհրդարանում ստեղծվել է ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով: Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում իրականացրած աշխատանքների շնորհիվ, համագործակցելով Հայաստանում գործող մի շարք հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ, մշտապես և հետևողական աշխատանքներ է իրականացնում Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հիմնահարցերի, նրանց խնդիրների բարձրաձայնման և դրանց լուծման ուղղությամբ:
12. ՀՀ կառավարության 2023 թ. սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թ. դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1674-Լ որոշմամբ հաստատվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թթ. գործողությունների ծրագիրը, որի 4.8 կետով նախատեսվում է ընդունել «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը: Վերջինիս նպատակն է կարգավորել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների իրականացման հետ կապված հարաբերությունները, սահմանել դրանց հետ կապված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրները, ինչպես նաև կանոնակարգել Ազգային փոքրամասնությունների պալատի ձևավորման և գործունեության կազմակերպահրավական հիմքերը: Այսպես, ազգային փոքրամասնությունների իրավունքների իրականացմանը նպաստելու, իրավունքների իրականացման հետ կապված իրավիճակը և խնդիրները քննարկելու, խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկներ պատրաստելու և դիրքորոշում հայտնելու նպատակով նախատեսվում է ստեղծել Ազգային փոքրամասնությունների պալատ: Նախատեսվում է պալատին ի թիվս այլնի օժտել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների իրականացման վիճակի մշտադիտարկման գործառույթով:
13. Խարտիայով սահմանված իրավունքների, պարտավորությունների և դրանց իրականացման ոլորտին առնչվող շահագրգիռ մարմիններին, կազմակերպություններին և անձանց իրազեկելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքէջում (http://www.gov.am/am/staff-structure/info/74/) տեղադրված են ոլորտին առնչվող փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային փաստաթղթերը և դրանց առնչվող զեկույցները, Հայաստանի

Հանրապետության օրենսդրությունը՝ հայերենով և ռուսերենով, ԵԽ փորձագետների կոմիտեի կարծիքները և դրանց վերաբերող մեկնաբանությունները: Փաստաթղթերի փաթեթը պարբերաբար թարմացվում է:

բ) տարածաշրջանային կամ փոքրամասնության յուրաքանչյուր լեզվի աշխարհագրական տարածքի ընդունումը՝ երաշխավորելու համար, որ առկա կամ նոր վարչական բաժանումները չեն խոչընդոտում տվյալ տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվի զարգացմանը,

14. «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան (կից հայտարարությամբ) վավերացնելու մասին» ՀՀ ԱԺ 28.12.01թ. N 247-2 որոշմանը կից հայտարարության համաձայն, «Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի» իմաստով Հայաստանի Հանրապետության փոքրամասնությունների լեզուներ են ասորերենը, եզդիերենը, հունարենը, ռուսերենը և քրդերենը[2]»: Միաժամանակ, Հայաստանում այլ էթնիկ խմբերի ներկայացուցչությունները, իրականացնում են տարբեր ծրագրեր՝ ուղղված իրենց էթնիկ խմբերի պահպանմանը և լեզվի զարգացմանը:
15. ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումները շարունակվել են 2020-2022 թվականներին: Այդ ընթացքում կառավարությունը հավատարիմ է մնացել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցով բնակեցված համայնքների նկատմամբ որդեգրած քաղաքականությանը:
16. Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնություններով առավել խիտ բնակեցված են Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, և Կոտայքի մարզերը՝ համաձայն Հավելված 1-ի:
17. **Արագածոտնի մարզում** ՀՀ կառավարության որոշմամբ համայնքների խոշորացման ծրագրի շրջանակներում մարզում վարչատարածքային ներկա բաժանմամբ առկա է ազգային փոքրամասնություններով (եզդիներ և քրդեր) խիտ բնակեցված չորս համայնք, որից 3-ը՝ խոշորացված *Աշտարակի տարածաշրջանում՝* Շամիրամ համայնք (Շամիրամ բնակավայրով), *Արագածի տարածաշրջանում՝* Ալագյազ համայնք (Ալագյազ, Ավշեն, Սադունց, Ճարճակիս, Միրաք, Շենկանի, Ջամշլու, Ռյա-Թազա, Կանիաշիր, Սիփան և Միջնատուն բնակավայրերով), *Թալինի տարածաշրջանում՝* Մեծաձոր համայնք (Մեծաձոր և Օթևան բնակավայրերով) և Արևուտ համայնք (Արևուտ, Դդմասար, Թլիկ, Կանչ, Հակո և Սորիկ բնակավայրերով):
18. **Արարատի մարզում** բնակվում են ասորիներ, ռուսներ, եզդիներ, հույներ, քրդեր: Ասորիները մեծ թիվ են կազմում Վերին Դվին և Դիմիտրով բնակավայրում: Եզդիների թիվը մեծ է Այնթապ, Մարմարաշեն, Մխչյան, Ռանչպար, Նորամարգ գյուղական համայնքներում:
19. Վերին Դվին համայնք**ի** բնակչության 80 տոկոսն ասորիներ են: Համայնքն ունի գործող եկեղեցի, մատուռ: Համայնքում գործում է «Արևելքի ասորական կաթողիկոսության սուրբ առաքելական եկեղեցի» Հայաստանի ասորական կրոնական կազմակերպությունը: Համայնքում գործում է «Աթուր» հասարակական կազմակերպությունը և «Աթուր»

[2] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=81177

ասորական ազգային երգի-պարի համույթը, որը մշտապես մասնակցում է մարզում, ինչպես նաև հանրապետությունում անցկացվող միջոցառումներին: Հուլիսի 3-ը նշվում է ասորական եկեղեցու օր, ապրիլի 1-ը ասորիների համազգային տոնն է՝ Նոր տարին, իսկ հունիսի 14-ին՝ նշվում է «Մարեզ»-ը՝ որպես ասորիների կրոնական տոն: Օգոստոսի 7-ին նշվել է Օսմանյան Թուրքիայի կողմից ասորիների դեմ կատարված ցեղասպանության օրը: Վերին Դվինի միջնակարգ դպրոցում դասավանդվում է ասորերեն ն և ասորիների պատմությունը: Դպրոցը ևս ակտիվ մասնակցություն է ունենում ազգային ավանդույթների պահպանման, ինչպես նաև ազգային մշակույթի զարգացման գործում:

20. Դիմիտրով բնակավայրի բնակչության 20 տոկոսն ասորիներ են: Բնակավայրում գործում է «Ռուս ուղղափառ եկեղեցու ՀՀ Արարատի մարզի Դիմիտրով գյուղի Կիրիկ և Իուլիտա Սբ. Նահատակների եկեղեցու ուղղափառ համայնք» կազմակերպությունը, գործում է նաև «Նինվե» հասարակական կազմակերպությունը: Ամեն տարի հուլիսի 28-ին բնակավայրում նշվում է «Շարա» կրոնական տոնը: Բնակավայրն ակտիվորեն մասնակցում է ինչպես մարզային, այնպես էլ հանրապետական միջոցառումներին: Մեծապես կարևորվում են ազգային մշակույթի և ավանդույթների պահպանման հարցերը:

21. Ազգությամբ եզդի երեխաները իրենց մայրենի լեզուն ուսումնասիրում են արտադասարանական խմբակներին հատկացված ժամերի ընթացքում: Վերջին 3 տարիների ընթացքում եզդի աշակերտներ ունեցող դպրոցներին տրամադրվել է շուրջ 83 եզդիերեն այբբենարան, 2-11-րդ դասարանների 180 հատ եզդիերեն գրականության, 63 հատ եզդիերենի դասագրքեր, ինչպես նաև եզդիերենին վերաբերող դիդակտիկ նյութեր:

22. **Արմավիրի մարզի** ազգային փոքրամասնությունները հիմնականում բնակեցված են գյուղական համայնքներում, սակայն քաղաքներում ևս ապրում են ռուսներ, եզդիներ և ուկրաինացիներ: ՀՀ Արմավիրի մարզում մեծ թիվ են կազմում եզդի ազգի ներկայացուցիչները: Նրանք խիտ են բնակեցված հետևյալ համայքներում՝ Ֆերիկ-254, Երասխահուն -930, Արտաշար-511, Զարթոնք -980, Եղեգնուտ-663 և Նալբանդյան -895: Մարզի Նոր-Արտագերս համայնքում միաժամանակ բնակեցված են ինչպես եզդիներ, այնպես էլ ասորիներ: Համապատասխան համայնքներում ազգային փոքրամասնություն-ներին վերաբերող խնդիրները համակարգում են համայնքապետարանների կրթամշակութային հարցերով պատասխանատու ծառայողները:

23. **Գեղարքունիքի մարզի** 57 համայնքներում 2022 թ. տվյալներով բնակվում են ազգային փոքրամասնությունների 495 ներկայացուցիչներ, որոնցից՝ 134 եզդի, 125 ռուս, 18 ասորի, 99 քուրդ, 6 հույն, 47 ուկրաինացի և 66 այլ:

24. Գեղարքունիքի մարզային ենթակայության դպրոցներում սովորում են ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ հանդիսացող 39 աշակերտ այդ թվում՝ 16 քուրդ, 14 ռուս, 4 եզդի, 2 ուկրաինացի, 2 հույն և 1 վրացի: Ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքներում, բացառությամբ Սեմյոնովկա համայնքի, հիմնվել են նախադպրոցական հաստատություններ և նախակրթարաններ, ուր հաճախում են նաև ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ հանդիսացող սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ՝ մասնավորապես Չկալովկա համայնքում, ազգությամբ քուրդ 2 երեխա: Ազգային փոքրամասնության պատկանող որոշ անձինք ճանաչում են ռուսերենը որպես իրենց փոքրամասնության լեզու և կցանկանային, որ ռուսերենը շարունակվի գործածվել որպես իրենց երեխաների կրթության լեզու:

25. **Շիրակի մարզում** 2022 թվականի դրությամբ բնակվում են 2155 ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ, որոնցից ռուսներ՝ 1397, եզդի՝ 667, քուրդ 12,

հույն 14, ասորի 11, ուկրաինացի՝ 54 և այլն: Մարզի տարածքում համայնքային խոշորացումները և համայնքների վարչական սահմանների փոփոխությունները չեն խոչընդոտել փոքրամասնության լեզվի զարգացմանը: Փոքրամասնությունների լեզուներին տիրապետող աշխատակիցներ աշխատում են նաև տեղական ինքնակառավարման մարմիններում: Շիրակի մարզում բնակվող ազգային փոքրամասնությունները ներգրավված են մարզի հասարակական, քաղաքական և մշակութային կյանքին, համագործակցում են պետական մարմինների ու այլ կազմակերպությունների հետ:

26. Մարզում գործում են հունական «Էլլադա», լեհերի համագործակցության «Պոլոնիա», ռուսական «Ռոսիա», եզդիների «Հյուսիսային մարզերի եզդիների միավորում» հասարակական կազմակերպությունները: Մարզի Ազատան համայնքում բնակվում է 27 եզդի ընտանիք, այստեղ գործող «Հյուսիսային մարզերի եզդիների միավորում» հասարակական կազմակերպությունը զբաղվում է ՀՀ Շիրակի մարզի եզդիների կրթական, մշակութային, սոցիալական և իրավունքների պաշտպանության հարցերով, կազմակերպում է ազգային և կրոնական տոներին նվիրված տարաբնույթ միջոցառումներ:
27. **Կոտայքի մարզում** 2022 թվականի դրությամբ բնակվում են ազգային փոքրամասնությունների 4635 ներկայացուցիչներ, որոնցից 3000-ից ավելին եզդիներ են:
28. Համայնքների խոշորացման արդյունքում ասորիներով բնակեցված Արզնի համայնքը չի միավորվել որևէ այլ համայնքի հետ, քանի որ վերջինիս հարևանությամբ առկա են միայն հայաբնակ համայնքներ և այդ համայնքների հետ միավորումը կփոփոխեր նորաստեղծ համայնքում ասորի բնակչության կառուցվածքը: Արզնի համայնքում 2023 թվականին կայացած տեղական ինքնակառավարման մարմնի ընտրություններում համայնքի ղեկավար է ընտրվել ազգությամբ ասորի Ֆելիքս Միրզոևը: Արզնի գյուղի ավագանու 9 անդամներից 6-ը ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ են՝ 5 ասորի, 1 եզդի:
29. Մարզի ազգային փոքրամասնության ներկայացուցիչ, ասորի Արսեն Միխայլովը (Արզնիից) ՀՀ վարչապետի օգնականն է:
30. Կոտայքի մարզի Ջրվեժի, Զովունու Ռ. Բաղդասարյանի անվան, Նոր Գեղիի N 1, Քանաքեռավանի միջնակարգ դպրոցներում ուսուցանվում է եզդիերեն, իսկ Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցում՝ ասորերեն խմբակի շրջանակներում:
31. **Լոռու մարզում** 2022 թվականի դրությամբ բնակվում են ազգային փոքրամասնությունների շուրջ 4000 ներկայացուցիչներ, որոնցից 2384 ռուս, 768 եզդի, 125 հույն, 11 քուրդ, 33 վրացի, 28 ուկրաինացի: Ազգային փոքրամասնություն ունեցող ամենամեծաթիվ համայնքներն են Ֆիոլետովո և Լերմոնտովո համայնքները:
32. Լերմոնտովոյում բնակվող ռուսներն ու եզդիները կազմում են համայնքի բնակչության 74 %-ը՝ 808 բնակիչ, որոնցից 776-ը՝ 70 %-ռուս-մոլոկաններ, 43-ը՝ 4 %- եզդիներ:
33. Ֆիոլետովո համայնքի բնակչության 99.5%-ը՝ 1252 հոգի ռուս-մոլոկաններ են: Համայնքում առկա են ռուսերենով ցուցանակներ: Համայնքապետարանի կողմից մոլոկան բնակչությանը պարբերաբար տրամադրվել է սոցիալական օգնություն: Համայնքապետարանի կողմից դիմումների պատասխանները և տեղեկանքները տրամադրվում են թե՛ հայերեն, թե՛ ռուսերեն:
34. Մարզի Լոռի Բերդ համայնքում ազգային փոքրամասնությունները կազմում են համայնքի բնակչության 1,5%-ը՝ 85 բնակիչ, որից հույն՝ 0.74%-ը 42 բնակիչ, ռուս՝ 0.4%-ը, 23, և եզդի՝ 0.3%-ը, 18 բնակիչ:
35. Փամբակ համայնքի Լեռնապատ և Ձորագետ գյուղերում ազգային փոքրամասնությունները

կազմում են համայնքի բնակչության 1,5% -ը՝ 39 բնակիչ, որից Ռուս՝ 0.8%-ը 16, Գերմանացի՝ 0.4 %-ը, 8, եզդի՝ 0,5%-ը 12 և հույն 0.05%-ը՝ 1 բնակիչ:

36. Թումանյան համայնքի բնակչության մեջ ազգային փոքրամասնությունները կազմում են համայնքի բնակչության 1,3%-ը՝ 76 բնակիչ, որից հույն՝6, եզդի՝ 42, ռուս՝ 28: Թումանյան համայնքի պետական հաստատություններում առկա են եռալեզու վահանակներ:
37. Ազգային փոքրամասնության ներկայացուցիչները պարբերաբար ընդգրկվել են աջակցության ծրագրերում:
38. Տաշիր համայնքի ազգային փոքրամասնությունները կազմում են համայնքի բնակչության 2.6%-ը՝ 738 բնակիչ, որից՝ 497 Եզդի՝ (1.7%), 200 ռուս՝ (0.7%), 25 հույն՝ (0.08%), 5 վրացի՝ (0.02%), 4 ուկրաինացի՝ (0.01%), 3 քուրդ՝ (0.01%), 2 գերմանացի՝ (0.006%): Համայնքում տեղադրված են ռուսերեն ցուցանակներ:
39. Համայնքային բյուջեից կյանքի դժվարին պայմաններում գտնվող ազգային փոքրամասնությունների ընտանիքներին տրամադրվել է սոցիալական աջակցություն:
40. Ստեփանավան համայնքում ազգային փոքրամասնությունները կազմում են համայնքի բնակչության 6% 113 բնակիչ, որից՝ 20 Հույն (0.1%), 58 ռուս (0.3%), և 35 եզդի՝ (0.2%):
41. Սպիտակ համայնքում Ազգային փոքրամասնությունները կազմում են համայնքի բնակչության 0.06%-ը (25 բնակիչ), որից՝ ռուս՝ 17 (0.03%), Եզդի՝ 5 (0,1 %) , ասորի՝ 1(0.01%), վրացի՝ 1(0.01%),
42. Յաղդան բնակավայրում ապրում են հունական ծագում ունեցող մի քանի ընտանիքներ:
43. **Տավուշի** մարզում ազգային փոքրամասնություններով համահավաք (կոմպակտ) բնակեցված բնակավայրեր չկան: Մարզի տարբեր համայնքներում 2022 թվականի դրությամբ ոչ կոմպակտ ձևով բնակվում են այլ ազգերի 610 ներկայացուցիչներ, որոնց մեծ մասը՝ 340-ը ռուսներ են, որոնց շփման հիմնական լեզուն հայերենն է:
Մարզերում ըստ ազգությունների բաշխումը ներկայացված է հետևյալ հղումով.
https://armstat.am/am/?module=publications&mid=6&id=2623

գ) փարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին աջակցելու համար վճռական գործողություններին դիմելու անհրաժեշտությունը՝ դրանք պաշտպանելու համար,

44. ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում իրականացրած աշխատանքների շնորհիվ, համագործակցելով Հայաստանում գործող մի շարք հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ, մշտապես և հետևողական աշխատանքներ է իրականացնում Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հիմնահարցերի, նրանց խնդիրների բարձրաձայնման և դրանց լուծման ուղղությամբ:
45. Հայաստանի Հանրապետության կարևորագույն օրենքները թարգմանված են և շարունակվում են թարգմանվել ռուսերեն:
46. Ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանմանն աջակցելու նպատակով ուսումնական ծրագրեր ստեղծելուց, դասագրքեր հրատարակելուց, մանկավարժական կադրեր պատրաստելուց բացի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական միջոցներ են հատկացվում էթնիկ համայնքների հասարակական կազմակերպություններին՝ նրանց կողմից հրատարակվող պարբերական մամուլի

տպագրման գործընթացը խրախուսելու համար: Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարությունն աջակցություն է ցուցաբերում ազգային 10 փոքրամասնությունների լեզուներով հրատարակմանը:

47. ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի)» կարգում կատարվել է փոփոխություն (11.05.23 N 720-Ն), որը ՀՀ բուհերի առկա ուսուցման ընդունելության հանրապետական ընդունող հանձնաժողովին հնարավորություն է տալիս բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության տվյալ ուստարվա համար հատկացված անվճար տեղերը բաշխել համապատասխան մասնագիտությունների վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքած և քննություններից առավել բարձր միավոր ունեցող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների միջև:
48. ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ցանկով նախատեսվում է բարձրագույն կրթության բակալավրի կրթական աստիճանով (այդ թվում՝ անընդհատ ու ինտեգրացված կրթական ծրագրերով) յուրաքանչյուր տարի մինչև 7 անվճար տեղերի հատկացում՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ հանդիսացող դիմորդների ընդունելության համար:
49. Վ. *Բրյուսովի անվան պետական համալսարանում* մշտապես խթանվում է ազգային փոքրամասնությունների լեզուների զարգացումը, ինչպես նաև մշակութային կապերի հաստատումը և ամրապնդումը: Համալսարանում գործում են Հունարենի և հունական մշակույթի կենտրոնը, Ֆրանց Վերֆելի անվան եբրայագիտության կենտրոնը, Ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոնը, ինչպես նաև վրացերենի կենտրոնը, որտեղ ԲՊՀ-ն ապահովում է տվյալ լեզվի ներկայացուցիչների և լեզվակիր դասախոսների ուղղակի մասնակցությունը մշակութային գործունեությանը՝ դրսևորելով կառուցողական մոտեցում տարածաշրջանային կամ ազգային փոքրամասնությունների լեզուների ճանաչումը որպես մշակութային հարստության արտահայտություն ապահովելու գործում: Համալսարանը պարբերաբար կազմակերպում է նաև ազգային փոքրամասնությունների պատմությանը, գրականությանը, մշակույթին, ազգային տոներին և այլ նշանակալից իրադարձություններին նվիրված միջոցառումներ, դասախոսություններ և սեմինարներ:
50. Խ. *Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում* սովորում են 1 հույն, 3 եզդի և 5 ասորի ուսանողներ: Համալսարանում կրթությունն իրականացվում է բացառապես հայերենով, վերոնշյալ ուսանողները դասերին մասնակցում են նույնպես հայերենով:
51. *Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում* սովորում են 4 եզդի, 1 ասորի, 1 բելառուս, 4 ռուս ուսանող: Հաշվի առնելով նրանց փոքրաթիվ լինելու հանգամանքը, ազգային փոքրամասնությունների լեզվական քաղաքականություն չի իրականացվում:

դ) տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածման հեշտացումը և/կամ խրախուսումը բանավոր և գրավոր խոսքի մեջ, հասարակական կամ անձնական կյանքում,

52. Հայաստանի հանրային ռադիոն ամեն օր հաղորդում է հեռարձակում տարածաշրջանային

կամ փոքրամասնությունների լեզուներով՝ եզդիերեն, քրդերեն, ռուսերեն, ասորերեն, հունարեն: Ազգային փոքրամասնությունների լեզուներով, բացի հիմնական լրատվական թողարկումներից, լինում են նաև պատմամշակութային, ազգագրական թեմաներով հաղորդումներ: «Ռուսերենով հեռարձակվում է «Наш дом-Армения» հաղորդաշարը, որն անդրադառնում է ՀՀ-ում բնակվող բոլոր ազգային փոքրամասնությունների մասին իրադարձություններին և համատեղ միջոցառումներին»:

53. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ ավագանին որոշում է ընդունում փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների անվանումների վերաբերյալ:
54. Այս առումով աշխատանքներ տարվել են Լոռու մարզում, մասնավորապես Ֆիոլետովո, Լերմոնտովո, Պրիվոլնոյե համայնքներում: Բնակավայրերի անվանումների ցուցանակները և՛ հայերեն են, և՛ ռուսերեն: Կողես և Յաղդան համայնքներում բնակվող հույները, որոնք ամուսնացել են հայերի հետ, բավարար տիրապետում են հայերենին: Համայնքի ղեկավարին առաջարկվել է տեղադրել նաև հունարեն ցուցանակներ, սակայն վերջինս, հաշվի առնելով վերոգրյալը, դրա անհրաժեշտությունը չի տեսնում:
55. ՀՀ մարզպետարանների պաշտոնական կայքէջերում ազգային փոքրամասնությունների համար կա առանձնացված բաժին, որտեղ լուսաբանվում են նրանց վերաբերվող հարցեր, նորություններ, տեղադրված են համապատասխան իրավական ակտերը, տարեկան զեկույցները, ազգային տոներին նվիրված շնորհավորական ուղերձներ:
56. 2022 թվականին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը կրթության ու դաստիարակության ոլորտում ներդրած ավանդի համար ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի դպրոցների՝ եզդիերեն դասավանդող 12 ուսուցիչների շնորհակալագրեր է հանձնել:

ե) սույն Խարտիայում ընդգրկված բնագավառներում կապերի պահպանումն ու զարգացումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ գործածող խմբերի և միանման կամ նույնանման ձևով լեզուն գործածող պետության այլ խմբերի միջև, ինչպես նաև մշակութային կապերի հաստատումը այդ պետության մյուս խմբերի միջև, որոնք գործածում են տարբեր լեզուներ,

57. Ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների պաշտպանությունը երաշխավորվում է նաև «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի մի շարք հոդվածներով:
58. Վերոնշյալ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն աջակցում է իր տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանը և զարգացմանը, պետականծրագրերի իրականացման միջոցով նպաստում է նրանց կրոնի, ավանդույթների, լեզվի, մշակութային ժառանգության, մշակույթի պահպանման, տարածման և զարգացման համար պայմանների ստեղծմանը»: Նույն՝ ՀՀ Օրենքի 9-րդ հոդվածը յուրաքանչյուրի համար երաշխավորում է՝ Հայաստանի Հանրապետությունում մշակութային կյանքին մասնակցելը և մշակութային գործունեություն իրականացնելը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից,

համոզմունքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, 6-րդ հոդվածը՝ մշակութային արժեք է համարում նաև լեզուները, ազգային ավանդույթները և սովորույթները, աշխարհագրական տեղանունները:

59. «2023 թ. Կառավարությունը հաստատել է նաև ՀՀ մշակույթի պահպանության, զարգացման և հանրահռչակման 2023-2027 թթ. ռազմավարությունը և դրա կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը: Ռազմավարության մեջ հատուկ ուշադրություն է դարձվում ՀՀ ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգությանն ու անշարժ հուշարձանների պահպանությանը»:

զ) համապատասխան մեթոդների և միջոցների ապահովումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների դասավանդման և ուսուցման համար՝ բոլոր համապատասխան փուլերում,

60. Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրության 23-րդ կետը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:
61. Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ՝ «Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականությունը մասին» հոդվածի 10-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հանրակրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:
62. Արագածոտնի մարզ

    Ազգային փոքրամասնությունների բնակավայրերում գործում է 18 դպրոց՝ 603 աշակերտով՝ 496 եզդի և 107 քուրդ (388 տղա և 215 աղջիկ): Մարզի մյուս բնակավայրերի հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում են 196 աշակերտ, որից 81-ը՝ աղջիկ: Ալագյազի, Ճարճակիսի և Սիփանի միջնակարգ դպրոցներում ուսուցանվում է քրդերեն, իսկ եզդիերեն ուսումնասիրվում է խմբակների դասաժամերին: Ավշենի, Ջամշլուի հիմնական դպրոցներում,դպրոցական բաղադրիչների հաշվին, միաժամանակ ուսումնասիրվում են եզդիերեն և քրդերեն: Սադունցի, Կանիաշիրի, Միրաքի, Շենկանիի, Միջնատունի հիմնական և Ռյա-Թազայի միջնակարգ դպրոցներում դպրոցական բաղադրիչի դասաժամերը տրամադրվել են եզդիերենին: Արտենիի հիմնական դպրոցում, որտեղ սովորում են 7 եզդի աշակերտ, մայրենի լեզուն ուսուցանվում է խմբակի դասաժամին:
63. Արավիրի մարզ

    Մարզի մի շարք դպրոցներում (Տանձուտ, Երասխահուն գյուղական համայնքների և Արմավիր քաղաքի N 10-ը միջնակարգ դպրոցներում) դասավանդվում է եզդերեն առարկան 1-12-րդ դասարաններում՝ արտադպրոցական խմբակների ձևով՝ համաձայն ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թվականի փետրվարի 18-ի N 05-Լ հրամանի պահանջների:

    Ֆերիկ համայնքի հիմնական դպրոցն անվանակոչվել է ազգությամբ եզդի նախկին տնօրեն, գրող Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անունով:
64. Գեղարքունիքի մարզ

    Մարզի 25 հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում է 51 աշակերտ, որից 22-ը աղջիկ է, 29-ը՝ տղա: Մարզի Մարտունի, Վարդենիս, Գավառ համայնքների

դպրոցներում սովորում է 39 ռուս, 1 հույն, 11 քուրդ:

65. Լոռու մարզ

Լոռու մարզի 4 հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում է ազգային փոքրամասնությունների 429 աշակերտ, որից 210-ը աղջիկներ են, 219-ը՝ տղաներ: Մարզի Ստեփանավան, Ալավերդի, Գուգարք, Տաշիր, Սպիտակ, Վանաձոր քաղաքների դպրոցներում սովորում է 334 ռուս, 77 ասորի, 15 հույն, 3 քուրդ:

66. Շիրակի մարզ

Շիրակի մարզի 31 հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում է 86 աշակերտ, որից 36-ը աղջիկ է, 50-ը՝ տղա: Մարզի Գյումրի, Ախուրյան, Ամասիա, Արթիկ, Անի համայնքների դպրոցներում սովորում է 46 ռուս, 40 եզդի:

Մարզում ռուսերենի խորացված ուսուցում է իրականացվում Գյումրու N 1, 6, 7, 23 դպրոցներում: Գյումրիում գործում է ՌԴ գիտության և մշակույթի կենտրոնը, որը համագործակցում է Ռուսաստանի Դաշնության Գլխավոր հյուպատոսության հետ:

Գյումրի քաղաքում գործում է հունական համայնքի կիրակնօրյա դպրոց, հունարենի ուսուցումը կազմակերպվում է շաբաթական երեք անգամ, որին մասնակցում են 50 աշակերտ՝ նաև այլ մարզերից:

67. Սյունիքի մարզ

Մարզի 8 հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում է 14 աշակերտ, որից 5-ը աղջիկ է, 9-ը՝ տղա: Մարզի Կապան, Գորիս, Մեղրի, Քաջարան համայնքների դպրոցներում սովորում է 13 ռուս, 1 եզդի:

68. Վայոց ձորի մարզ

Մարզի 3 հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում է 5 ռուս աշակերտ, որից 3-ը աղջիկ է, 2-ը՝ տղա:

69. Տավուշի մարզ

Մարզի 10 հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում է 26 աշակերտ, որից 16-ը աղջիկ է, 10-ը՝ տղա: Մարզի Իջևան, Նոյեմբերյան, Տավուշ, Իջևան, Դիլիջան համայնքների դպրոցներում սովորում է 22 ռուս, 1 եզդի, 2 հույն:

Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոց են հաճախում ռուսերենով կրթություն ստացող 29 երեխա, որոնց թիվը ըստ դասարանների կազմում է՝ 1-ին դասարանում՝ 2, 2-րդ դասարանում՝ 5, 3-րդ դասարանում՝ 2, 4-րդ դասարանում՝ 3, 5-րդ դասարանում՝ 2, 7-րդ դասարանում՝ 4, 8-րդ դասարանում՝ 3 և 9-րդ դասարանում 4 երեխա: Նշված դպրոցում ռուսերենով ուսուցումը կազմակերպելու նպատակով փոխարինաբար գրքեր են վերցրել Լոռու մարզի Լերմոնտովի դպրոցից:

Ռուսերենի խորացված ուսուցմամբ դասարաններ կան Իջևանի N 5 հիմնական դպրոցում:

Մարզում բնակվող ազգային փոքրամասնություն կազմող բնակիչները տիրապետում են հայերենին, ուստի պետական մարմիններին դիմելու խնդիր վերոհիշյալ բնակչությունը չունի:

Կետ 2

70. Ըստ Հայաստանի Հանրապետության «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի՝ ազգային փոքրամասնությանը պատկանող երեխայի ընդունելությունը հաստատություն կարող է կատարվել երեխայի մայրենի լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում, իսկ դրա

բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կարող է կատարել ծնողը (օրինական ներկայացուցիչը):

71. Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրության 23-րդ կետը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:
72. «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը»: Նույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Կետ 3.

73. Ազգային փոքրամասնությունների մասին համապատասխան տեղեկատվությունը տեղադրված է ՀՀ մարզպետարանների կայքէջերում և հղում է արված ՀՀ կառավարության կայքէջին: Բացի այդ, Տարածքային կառավարման և զարգացման նախարարի կողմից մարզպետներին հանձնարարվել, իսկ Երևանի քաղաքապետին առաջարկվել է մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կայքէջերում «Ընդհանուր տեղեկություններ» բաժնում առանձնացնել «Ազգային փոքրամասնություններ» ենթաբաժինը՝ այնտեղ զետեղելով ազգային փոքրամասնությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը վերջիններիս թվի, պատմության, հուշարձանների, մշակութային իրադարձությունների և ունեցած առաջընթացի վերաբերյալ: Գործող հարթակներում լուսաբանվում են նրանց վերաբերվող հարցեր, նորություններ, տեղադրված են համապատասխան իրավական ակտերը, տարեկան զեկույցները, ազգային տոներին նվիրված շնորհավորական ուղերձներ:

Կետ 4.

74. 2003թ. ստեղծված Հայաստանի Հանրապետության կառավարության վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժինը.
   1) իրականացնում է ազգային փոքրամասնություններին, կրոնի ու խղճի ազատությանն առնչվող՝ կառավարության և վարչապետի քննարկմանը կամ կարծիքին ներկայացված իրավական ակտերի նախագծերի, ինչպես նաև առանձին հարցերի համապատասխանության ուսումնասիրություն կառավարության ծրագրին և քաղաքականության հիմնական ուղղություններին, աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ տալիս է համապատասխան ոլորտի զարգացման, գործունեության արդյունավետության բարելավման վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մասին եզրակացություններ,
   2) նախապատրաստում է իր գործունեության ոլորտների մասին տեղեկատվական նյութերն ու տեղեկանքները և ներկայացնում աշխատակազմի ղեկավարին,
   3) հսկողություն է իրականացնում իր գործունեության ոլորտներին առնչվող՝

կառավարության տվյալ տարվա գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների կատարման ընթացքի նկատմամբ:

75. ՀՀ վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժինը շարունակում է հետևել Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայից բխող գործողությունների ընթացքին: Դրանք են՝ տեղական ինքնակառավարման մարմիններում ազգային փոքրամասնությունների իրավունքների իրազեկման գործընթացը, ազգային փոքրամասնությունների իրավունքների գործնական իրացումը, խնդիրների ծագման դեպքում խորհրդակցությունների կազմակերպումը և միջոցառումների ձեռնարկումը:

76. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի աշխատողները պարբերաբար կազմակերպում են այցելություններ ու հանդիպումներ՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքների և հնարավորությունների մասին իրենց իրազեկելու, առկա խնդիրներին ծանոթանալու և դրանց լուծումները գտնելու նպատակով:

77. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի աշխատողները պարբերաբար հանդիպումներ են ունենում ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների ղեկավարների, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ մտավորականների, կրոնական առաջնորդների հետ, ինչպես նաև պարբերաբար այցելում են ազգային փոքրամասնությունների բնակավայրեր, որտեղ հանդիպումներ են ունենում համայնքների ղեկավարների, դպրոցների և նախադպրոցական հաստատությունների տնօրենների հետ: Այս հանդիպումների նպատակն է բարձրացնել շահագրգիռ կողմերի իրազեկվածության մակարդակը և տեղերում հետևել պետության ստանձնած պարտավորությունների կատարմանը:

78. Հանդիպումների ընթացքում ազգային փոքրամասնությունների կողմից բարձրացված հարցերը հանգամանորեն ուսումնասիրվում և վերլուծության են ենթարկվում և ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից պարբերաբար համապատասխան հանձնարարականներ են տրվում պետական մարմիններին և գերատեսչություններին՝ ազգային փոքրամասնությունների առաջ ծագած խնդիրների արդյունավետ լուծման նպատակով:

79. «2019 թ. մայիսի 3-ին ուժի մեջ է մտել «Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհուրդ ստեղծելու և խորհրդի կազմը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի N 486-Լ որոշումը: ՀՀ Վարչապետի 2023 թվականի դեկտեմբերի 29-ի N 1297-Լ որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ վարչապետի N 486-Լ որոշման մեջ, որի արդյունքում Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) կազմում ընդգրկվել են նաև ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, Արդարադատության նախարարների տեղակալները, իսկ խորհրդի նախագահ է դարձել վարչապետի աշխատակազմի ղեկավարը: Արդյունքում բարձրացել է խորհրդի կարգավիճակը և աշխատանքի արդյունավետությունը: Որոշման համաձայն Խորհրդի նախագահին է վարչապետի աշխատակազմի ղեկավարը: 2024թ. մարտի 5-ին գումարվել է խորհրդի նիստն ու այժմ քննարկվում է նոր աշխատակարգի ընդունման հարցը:

80. «Խորհրդի կազմը նշանակվում է երկու տարի ժամկետով: Խորհրդի կազմում անդամի թեկնածու ներկայացնելու իրավունք ունի առնվազն հինգ տարվա պետական գրանցում

ունեցող և տվյալ ազգային փոքրամասնությունը ներկայացնող հասարակական կազմակերպությունը: Յուրաքանչյուր ազգային փոքրամասնություն խորհրդի կազմում կարող է ունենալ ոչ ավելի քան երկու անդամ: Եթե որևէ ազգային փոքրամասնություն ներկայացնող հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված թեկնածուների ընդհանուր թիվը երկուսից ավելի է, ապա սահմանված երկու անդամների ընտրությունը կատարում է Խորհրդի նախագահը:

Հասարակական կազմակերպությունները թեկնածուներ են առաջադրում գործող խորհրդի լիազորությունների ավարտից երկու ամիս առաջ: Գործող Խորհրդի լիազորությունների ավարտից երեք ամիս առաջ Խորհրդի նոր կազմի ձևավորման մասին հայտարարություն է տրվում ՀՀ կառավարության կայքում (gov.am)՝ «Հայտարարություններ» բաժնում»: Խորհրդի ազգային փոքրամասնություններին ներկայացնող անդամների կազմը կփոխվի ընթացիկ տարվա մայիս ամսին»:

81. Խորհրդի նիստերին կարող են մասնակցել ազգային փոքրամասնությունների շահերը ներկայացնող կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև խորհրդի նախագահի կողմից հրավիրված այլ անձինք:
82. Խորհրդում ազգային փոքրամասնությունների խնդիրների քննարկումը իրականացվում է պետական կառավարման մարմինների ղեկավարության անմիջական մասնակցությամբ, ովքեր անհրաժեշտության դեպքում խնդիրների լուծումը կտեղափոխեն համապատասխան կառավարման մարմիններ դրանց լուծում տալու նպատակով: Արդյունքում, նախատեսվում է բարձրացնել Խորհրդի աշխատանքի արդյունավետությունն ու գործնականությունը:
83. Խորհուրդը նախագահում է ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարը, իսկ Խորհրդի գործունեության կազմակերպչական և տեխնիկական ապահովումն իրականացնում է վարչապետի աշխատակազմը՝ համապատասխան ստորաբաժանման միջոցով:

Կետ 5.

84. Տես նախորդ կետը:
85. Նպատակ ունենալով միավորել ջանքերն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման ուղղությամբ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր ստեղծվել է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով հասարակական խորհուրդ: Խորհրդի հիմնական նպատակն է՝ ազգային փոքրամասնությունների ինքնության հիմնական տարրերի՝ կրոնի, լեզվի, մշակութային ժառանգության, ավանդույթների պահպանմանը և խթանմանը նպաստող միջավայրի ստեղծումը, ինչպես նաև ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների վիճակի անընդհատ բարելավմանը, ներառյալ՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանն ուղղված հետազոտությունների, ուսումնասիրությունների կամ վերլուծությունների իրականացման աշխատանքների նպաստումը, համակարգային խնդիրների վերհանումը:
86. Շարունակվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական աջակցության տրամադրումն ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների կրթական-մշակութային գործունեությանը: Սկսած 2012թ.-ից

կրկնապատկվել է՝ հասնելով 20 մլն դրամի: Նշված գումարի չափը նախատեսվել է նաև 2019-2023թթ. պետական բյուջեով: «Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի 05.03.24թ. նիստում որոշվեց հավանություն տալ խորհրդի օրակարգում ներառված ՀՀ պետական բյուջեով ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպու-թյուններին հատկացված 20 մլն դրամ պետական աջակցության բաշխման նախագծին, իսկ ընթացիկ տարվա 3-րդ եռամսյակում քննարկել լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու անհրաժեշտությունը: «Ազգային փոքրամասնությունների հարցերով Խորհրդի որոշմամբ ամեն տարի պետական բյուջեով ազգային փոքրամասնություններին հատկացվող 20 մլն դրամից 8,998,000 դրամը հավասարապես բաշխվում է խորհրդում 11 ազգային փոքրամասնությունների համայնքները ներկայացնող կազմակերպություններին: Մյուս 10 մլն դրամը բաշխվում է համաձայն ազգային փոքրամասնությունները ներկայացնող կազմակերպությունների կողմից (նաև խորհրդի անդամ չհանդիսացող) նախապես ներկայացված և Խորհրդում հաստատված առավել կարևոր նախաձեռնությունների և ծրագրերի՝ առաջնահերթ բավարարելով ազգային-պետական կառույցներ չունեցող և (կամ) մեծաթիվ համայնքներ (եզդիական, ասորական, քրդական) ներկայացնող կազմակերպությունների կարիքները: Իսկ 1,002,000 դրամը փոխանցվում է խորհրդի կողմից երաշխավորված խորհրդի անդամ կազմակերպություններից մեկին՝ «Հունական համայնքների միություն» հասարակական կազմակերպությանը՝ Խորհրդի համատեղ ծրագրերի իրականացման նպատակով»:

Մաս 3

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կատարման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ներկայացրած 5-րդ զեկույցից հետո ձեռնարկված միջոցները և իրականացված ծրագրերը: Ձեռնարկված քայլերը՝ ըստ հոդվածների

Խ ա ր տ ի ա յ ի Հ ո դ վ ա ծ 8

Կրթություն

1.ա/

87. Հայաստանի Հանրապետության պաշտպանության տակ առնված լեզուները կրող ազգային փոքրամասնությունների համայնքներին տարրական կրթությունը հասանելի և մատչելի է էթնիկ լեզուներով: Մշակված է Ազգային փոքրամասնությունների հանրակրթական դպրոցի (դասարանի) ուսումնական պլանը՝ համաձայն որի պետական բաղադրիչի ուսումնական առարկաների ցանկում ընդգրկված ազգային փոքրամասնությունների «Մայրենի լեզու և գրականություն» առարկայի ուսուցման համար ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվին և գրականությանը, 1-12-րդ դասարաններում շաբաթական՝ տարրական դպրոցում՝ 4 դասաժամ, իսկ հիմնական և ավագ դպրոցներում 3-ական դասաժամ՝ նրանց համար գործող ուսումնական ծրագրերին համապատասխան: Բացի այդ, խառը բնակության վայրերում, որտեղ ազգային փոքրամասնությունների թիվը փոքր է, նախատեսված է նաև լեզվի խմբակի ձևով ուսուցման հնարավորություն:
88. 2022 թ. նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» ՀՀ օրենքի և ՀՀ

Կառավարության 2023 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» որոշմամբ կարգավորվում է ազգային փոքրամասնությունների համահավաք բնակության վայրերում նախադպրոցական կրթության շարունակականության ապահովումն ու ընդլայնումը:

89. Հայաստանի մի շարք գյուղական համայնքների դպրոցական շենքերում ստեղծվել են նախադպրոցական կրթության օջախներ, որտեղ օրվա առաջին կեսին գործում են դասարաններ ազգային փոքրամասնությունների 4-5 տարեկան երեխաների համար: Այդպիսի նախակրթարաններ գործում են ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Արմավիր և Արարատի մարզերի մի շարք հանրակրթական դպրոցներում:

90. Հայաստանում ապրող եզդի և քուրդ երեխաների նախադպրոցական կրթության խնդիրը պարբերաբար քննարկվում է համապատասխան բնակավայրերի տեղական ինքնակառավարման մարմինների հետ, սակայն որոշ համայնքներում նախադպրոցական տարիքի երեխաների թիվն այնքան փոքր է, որ նրանց համար նախադպրոցական կրթություն իրականացնելը շատ դժվար է:

91. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, սակավ բնակչություն ունեցող բնակավայրերում նախադպրոցական կրթության ծառայություններ մատուցելու նպատակով հայտարարել է ամենամյա այլընտրանքային ծախսարդյունավետ նախակրթարաններ հիմնելու նպատակով համայնքներին՝ դրամաշնորհների տրամադրման ծրագիր: 2021 թվականին դրամաշնորհի հատկացման մրցույթի հայտարարությանն արձագանքել և մասնակցության հայտ է ներկայացրել միայն Արմավիրի մարզի եզդիաբնակ Ֆերիկ համայնքը: Չնայած այն հանգամանքին, որ ծրագիրն իրականացվում է 2021 թվականից և կրում է շարունակական բնույթ, սակայն մինչ օրս եզդիաբնակ համայնքների կողմից շահառու դառնալու հայտ ներկայացվել է միայն Ֆերիկ համայնքի կողմից:

92. ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի «Այլոնուշկա մանկապարտեզ» գործում է ռուսերենով ուսուցմամբ տարատարիք խումբ, որտեղ կրթություն են ստանում ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ՝ ասորիներ: Ուսուցումը իրականացվում է՝ հիմք ընդունելով նախադպրոցական կրթական համալիր ծրագրերը ռուսերենով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ, քանի որ նախատեսված խմբի համար չունեն համապատասխան նախադպրոցական ծրագիր: Դաստիարակը, ով ազգությամբ ասորի է, չունի համապատասխան մասնագիտական կրթություն, այդ իսկ պատճառով ուսուցումն իրականացվում է ռուսերենով: 2019-2023 թվականների ընթացքում մանկապարտեզն ունեցել է ազգությամբ ասորի 23 սան: Մանկապարտեզում ամեն տարի ասորերենով անցկացվում են տարբեր միջոցառումներ, բաց դասեր՝ ազգությամբ ասորի դաստիարակի մասնակցությամբ: Ասորական Նոր տարվան (Հաբ Նիսան, որը 2008 թվականի ապրիլի մեկից հաստատվել է ՀՀ կառավարության կողմից) նվիրված միջոցառման անցկացումը դարձել է ավանդույթ, որին մասնակցում են նաև ծնողները՝ նպատակ ունենալով պահպանելու ազգային մշակույթն ու ավանդույթները:

93. ՀՀ Արագածոտնի մարզում մարզպետի աշխատակազմի առաջարկությամբ և ՀՀ կառավարության որոշմամբ, Ալագյազ համայնքի Ալագյազ բնակավայրում կառուցվում է մսուր մանկապարտեզ՝ նախատեսված 144 սանի համար, ուր հաճախելու հնարավորություն կունենան համայնքի 11 բնակավայրերի նախադպրոցական տարիքի երեխաները: Մանկապարտեզը շահագործման կհանձնվի 2024 թվականին: Մարզի Աշտարակի (3 սան),

Թալինի (12 սան), Ապարանի (1 սան) և Արագածի (8 սան) նախադպրոցական ուսումնական հաստատություններ են հաճախում 24 եզդի երեխա՝ 9 աղջիկ, 15 տղա, որոնց կրթությունը կազմակերպվում է հայերենով, քանի որ և՛ նրանց քանակն է անբավարար մայրենի լեզվով ուսուցում կազմակերպելու համար, և՛ համապատասխան որակավորմամբ մասնագետներ չկան: Երեխաները խոսում են հայերեն: Շամիրամի դպրոցահենք նախակրթարան է հաճախում ազգությամբ եզդի 3 տղա և 4 աղջիկ:

94. Լոռու մարզում նախադպրոցական կրթություն ռուսերենով իրականացվում է Լերմոնտովո համայնքում՝ «Սկազկա» նախադպրոցական ուսումնական հաստատությունում: Հաճախող 20 սաներից 12-ը (60%) մոլոկաններ են: Ստեփանավան, Տաշիր, Վանաձոր և Թումանյան համայնքներում ազգային փոքրամասնության 17 երեխա հաճախում է հայալեզու նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

95. ՀՀ մարզերում 2024 թվականի դրությամբ ազգային փոքրամասնությունների լեզուներով նախադպրոցական ուսումնական հաստատություններում ուսուցման կազմակերպումը հնարավոր չի եղել ապահովել՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում ոչ բավարար քանակով երեխաների առկայության, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների համայնքների կողմից նախաձեռնողականության բացակայության պատճառով՝ անկախ օրենսդրական կարգավորման առկայությունից[3]:

1.բ/

96. ՀՀ կառավարությունը 2021 թվականի փետրվարի 4-ին հաստատել է «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 136-Ն որոշումը, որով սահմանվել է Հանրակրթության նոր չափորոշիչը: Որոշմամբ հաստատված հավելված 2-ի 9-րդ կետով սահմանվել է, որ որպես **հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք,** ծրագրի շրջանավարտը պետք է՝ ազատ գրավոր և բանավոր հաղորդակցվի գրական հայերենով, կարդա, հասկանա, վերարտադրի պարզ գեղարվեստական և տեղեկատվական տեքստեր, ձևակերպի տեքստի հիմնական գաղափարը (ազգային փոքրամասնությունների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով).

97. Նույն որոշմամբ հաստատված հավելված 2-ի 10-րդ կետով սահմանվել է, որ որպես **հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք,** ծրագրի շրջանավարտը պետք է՝

1) վերլուծի և ընկալի տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանա դրանց հիմնական գաղափարը (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով).
2) հայերեն ազատ զրուցի իրեն հետաքրքրող թեմաների մասին, կառուցի ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառի ոչ վերբալ հաղորդակցման

[3] ՀՕ-267-Ն ՀՀ օրենքը «Նախադպրոցական կրթության մասին» , հոդված 4, կետ. 6
https://www.arlis.am/documentview.aspx?docid=142606

տարատեսակ միջոցներ (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով).

3) առնվազն երկու օտար լեզուներով (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում՝ առնվազն մեկ) հասկանա ծանոթ, պարբերաբար հանդիպող թեմաներով բանավոր և գրավոր խոսքի հիմնական իմաստը, լեզվակիր երկրներում կարողանա կողմնորոշվել և հաղորդակցվել հաղորդակցական պարզ իրավիճակներում:

97. Նույն որոշման 11-րդ կետով սահմանվել է, որ որպես **հանրակրթական միջնակարգ ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք,** ծրագրի շրջանավարտը պետք է՝ 1) գրական հայերենով ստեղծի տարբեր ոճերի և ժանրերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին (ազգային փոքրամասնությունների դպրոցների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով).

98. Որոշմամբ հաստատված հավելված 2-ի 33-րդ կետի 4-րդ ենթակետով, որպես հ**անրակրթական ընդհանուր պետական ծրագրի առարկայացանկի ձևավորման հիմնական սկզբունք,** սահմանվել է, որ «Օտար լեզուներ» բնագավառը հանրակրթական ընդհանուր պետական ծրագրի 2-րդ դասարանում ներկայացվում է մեկ օտար լեզվով, որը ռուսերենն է, 3-12-րդ դասարաններում՝ բացի ռուսերենից, ներկայացվում է առնվազն ևս մեկ օտար լեզվով: Ազգային փոքրամասնությունների դասարաններում «Օտար լեզուներ» բնագավառը հանրակրթական ընդհանուր պետական ծրագրի 2-12-րդ դասարաններում ներկայացվում է մեկ օտար լեզվով: 1-12-րդ դասարաններում բնագավառը կարող է ներկայացվել ազգային փոքրամասնության լեզուն և գրականությունը:

99. 2023 թ. դրությամբ ՀՀ մարզերի դպրոցներում ուսուցանվում է «Եզդիերեն», «Քրդերեն» և «Ասորերեն» առարկաները՝ ազգային փոքրամասնությունների աշակերտների համար (տե՛ս Հավելված 2, Աղյուսակ 1): «Ռուսաց լեզու» առարկան դասավանդվում է Հայաստանի բոլոր դպրոցներում որպես 1-ին օտար լեզու:

100. 2023 թ. նոյեմբեր ամսվա դրությամբ ՀՀ դպրոցներում սովորում են ազգությամբ եզդի 3027, քուրդ՝ 80, ասորի՝ 277, ռուս՝ 1387, հույն՝ 38 աշակերտ:

101. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ իրականացվում է ազգային փոքրամասնությունների տարրական, միջին և ավագ դպրոցների դասարանների համար նախատեսված դասագրքերի հրատարակումը: Դասագրքերի և առարկայական ծրագրերի էլեկտրոնային տարբերակները տեղադրվել են «Հայկական կրթական միջավայր» պորտալի «Պաշարների շտեմարան» ենթակայքում (http://lib.armedu.am)»:

102. Հայաստանի Հանրապետության կողմից համընդհանուր ներառական կրթության անցման համատեքստում իրականացվում է նաև ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների ներառումը կրթության մեջ: Համաձայն ՀՀ Կառավարության 11 օգոստոսի 2022 թվականի N 1265-Ն որոշման, հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվել է ֆինանսավորման մոդել, որը հնարավորություն է ընձեռում ըստ անհրաժեշտության ապահովել երեխային տրամադրվող խելամիտ հարմարեցումներ և մատչելի միջավայր՝ կրթական գործընթացում բարձրացնելու նրա

մասնակցության մակարդակը և դասապրոցեսին առավել ակտիվ ներգրավվածությունը: 2023 թվականին արձանագրված տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության մեջ ներգրավված ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաներից կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունի 164 երեխա, որոնք ստանում են համապատասխան մանկավարժահոգեբանական աջակցություն:

103. Ազգային փոքրամասնությունների բնակավայրերի դպրոցները, մյուս դպրոցների նման, ապահովված են համացանցով, ընդգրկված են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում, schools.am համացանցային տարածքում ունեն դպրոցական կայքեր:

104. ՀՀ կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարը 2021 թվականի նոյեմբերի 29-ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2009 թվականի օգոստոսի 21-ի N 752-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 81-Ն հրամանը, որով սահմանվել է նաև ազգային փոքրամասնությունների լեզվին, պատմությանը, մշակույթին վերաբերող դասագրքերի ամենամյա տպագրման կարգը:

105. Ազգային փոքրամասնությունների մեծ մասի լեզուներով համակարգված ուսումնական ծրագրեր անհնար է իրականացնել թե՛ լեզվի կրողների փոքրաթվության, թե՛ Հայաստանի տարածքում նրանց ցրված ապրելու հետևանքով, ինչպես նաև որոշ լեզուների հանդեպ նվազ պահանջարկի կամ պահանջարկի բացակայության պատճառով:

ԵԶԴԻԵՐԵՆ

106. 2020 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ձեռք են բերվել և բաշխվել են հետևյալ դասագրքերը՝ «Եզդիերեն այբբենարան»՝ 720, «Եզդի գրականություն» /5-րդ դասարան՝ 644, «Եզդի գրականություն» (8-րդ դասարան՝ 635, «Եզդի գրականություն» (9-րդ դասարան)՝ 638, «Եզդիերեն» (3-5-րդ դասարան)՝ 1614, «Եզդիերեն» (6-8-րդ դասարան)՝ 1625:

107. 2021 թվականին ձեռք են բերվել հետևյալ դասագրքերը՝ «Եզդիերեն այբբենարան»՝ 257, «Եզդի գրականություն» (6-րդ դասարան)՝ 248, «Եզդի գրականություն» (7-րդ դասարան)՝ 240, «Եզդի գրականություն» (10-րդ դասարան)՝ 138, «Եզդի գրականություն» (11-րդ դասարան)՝ 128, «Եզդիերեն» (9-10-րդ դասարան)՝ 169:

108. 2022 թվականին ձեռք են բերվել հետևյալ դասագրքերը՝ «Եզդիերեն այբբենարան»՝ 400, «Եզդիերեն» (2-րդ դասարան)՝ 400, «Եզդիերեն» (3-րդ դասարան)՝ 400, «Եզդիերեն» (4-րդ դասարան)՝ 400, «Եզդի գրականություն» (12-րդ դասարան)՝400, «Եզդիերեն» (11-12-րդ դասարան)՝ 400,

109. 2023թ ազգային փոքրամասնությունների աշակերտների համար տպագրվել է . 1-ին դասարանի համար 2 տարբեր հեղինակների «Եզդիերեն այբուբեն»՝ 198, «Եզդիերենի» 315 դասագիրք՝ նախատեսված 3-5–րդ դասարանի աշակերտների համար, 5-րդ դասարանի համար «Եզդի գրականություն»՝ 84, «Եզդիերեն» 6-8–րդ դասարանների համար՝ 132, «Եզդի գրականություն» 8-րդ և 9-րդ դասարանների համար՝ 37–ական:

110. ***<u>Արմավիրի մարզի</u>*** ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում են 986 եզդի երեխաներ: Մարզում գործող 111 հանրակրթական ուսումնական հաստատություններից 10-ում գործում է եզդիերենի խմբակ:

111. Ֆերիկ համայնքի հիմնական դպրոցում 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դրությամբ 1-9-րդ դասարաններում դասավանդվում է եզդիերեն՝ որպես ուսումնական պլանով հաստատված դասաժամ:

112. Մարզում գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ազգային փոքրամասնությունների լեզուների դասավանդման հետ կապված հիմնական խնդիրը համապատասխան որակավորմամբ մասնագետի բացակայությունն է:

113. Այն ուսումնական հաստատություններում, որտեղ սովորում են եզդի երեխաներ իրականացվել են միջոցառումներ՝ նվիրված ազգային փոքրամասնությունների տոներին, ինչպես նաև կազմակերպվել է եզդի աշակերտների այցելություն Ակնալիճ բնակավայրում բացված «Լալիշ» սրբավայր:

114. ***<u>Արագածոտնի մարզի</u>*** ազգային փոքրամասնությունների բնակավայրերում գործում է 18 դպրոց, որտեղ սովորում է 496 եզդի աշակերտ: Շամիրամի հիմնական դպրոցում ներդրվել է «Ազգային երգ ու պար» առարկան, որը իրականացվում է խմբակի դասաժամերին, Ալագյազի, Ճարճակիսի և Սիփանի միջնակարգ դպրոցներում եզդիերեն ուսումնասիրվում է խմբակների դասաժամերին: Ավշենի, Ջամշլուի հիմնական դպրոցներում, դպրոցական բաղադրիչների հաշվին, միաժամանակ ուսումնասիրվում են եզդիերեն և քրդերեն: Սադունցի, Կանիաշիրի, Միրաքի, Շենկանիի, Միջնատունի հիմնական և Ռյա-Թազայի միջնակարգ դպրոցներում դպրոցական բաղադրիչի դասաժամերը տրամադրվել են եզդիերենին: Արտենիի հիմնական դպրոցում, որտեղ սովորում են 7 եզդի աշակերտ, մայրենի լեզուն ուսուցանվում է խմբակի դասաժամին: Դպրոցներում աշխատում է ազգային փոքրամասնության 45 ուսուցիչ, որից 36-ը՝ տղամարդ և 9-ը՝ կին: Ուսուցիչներից 31-ը (որոնցից 3-ը՝ կին) ունեն բարձրագույն կրթություն: 19 ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեստավորմանը և նրանցից 8-ը հաջողությամբ հաղթահարել է անցողիկ շեմը: Ազգային փոքրամասնությունների 9 դպրոցի տնօրեն ազգությամբ եզդի է (8 տղամարդ և 1 կին):

115. Ազգային փոքրամասնությունների հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտներն ակտիվորեն մասնակցում են դպրոցականների առարկայական օլիմպիադաներին, մարզային («Ոսկե սերմեր» 4-րդ մրցանակաբաշխություն, «Մենք մեր տանն ենք» մշակութային միջոցառում), հանրապետական միջոցառումներին, ազգային տոներին նվիրված մարզային («Ալդա Թաուսի Մալաք», «Աիդա Եզդիդ»), համայնքային և դպրոցական, ինչպես նաև մարզական միջոցառումներին:

ՀՀ Արագածոտնի մարզում ստեղծված են բոլոր պայմանները ազգային փոքրամասնությունների մշակույթի ու ավանդույթների պահպանման համար: Դպրոցներում գործածվում են ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից երաշխավորված և տպագրված ազգային լեզվով դասագրքերը և ապահովվում է համապատասխան լեզվի ուսուցումը, ինչը կատարվում է պետական միջոցների հաշվին՝ անկախ երեխաների թվից:

Շամիրամի հիմնական դպրոցում բաժանորդագրվում են «Արեգ», «Շամս» մանկական ամսագրերը, համայնքներում՝ «Ռյա Թազա», «Զագրոս» թերթերը: Ակտիվ է համագործակցությունը ինչպես այլ մարզերի, այնպես էլ արտասահմանում բնակվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ:
Եզդիների միության նախագահ Խդր Հաջոյանի հովանավորությամբ Ռյա Թազայի միջնակարգ դպրոցի ավագ դասարանների 20 աշակերտ այցելել է Հանրային հեռուստաընկերություն, շրջել տաղավարներում, ծանոթացել լրագրողի աշխատանքին: Նպատակը եղել է աշակերտների մեջ հետաքրքրություն առաջացնել եթեր հեռարձակվող եզդիական հաղորդումների հաղորդավարի աշխատանքի նկատմամբ և օգնել ապագա մասնագիտության կողմնորոշման հարցում:

116. ՀՀ կրթության, գիտության, մշակույթիև սպորտի նախարարին կից աշակերտական խորհրդում սահմանված կարգով ընդգրկված է նաև Ռյա-Թազայի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտուհի Թեհմինե Ֆերոյանը:

117. ***<u>Արարատի մարզի</u>*** 69 հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում է 340 եզդի աշակերտ: Ազգությամբ եզդի երեխաները իրենց մայրենի լեզուն ուսումնասիրում են արտադասարանական խմբակներին հատկացված ժամերի ընթացքում: Դպրոցներն ապահովված են համապատասխան դասագրքերով և ուսումնաօժանդակ գրականությամբ:

118. ***<u>Կոտայքի մարզի</u>*** Ջրվեժի, Զովունու Ռ. Բաղդասարյանի անվան, Նոր Գեղիի N 1, Քանաքեռավանի միջնակարգ դպրոցներում ուսուցանվում է եզդիերեն լեզուն:

119. Ջրվեժի միջնակարգ դպրոցում եզդիերեն ուսուցանվում է խմբակի տեսքով, քանի որ եզդի սովորողների թիվը այնքան էլ մեծ չէ: 1-12-րդ դասարաններում եզդիերենի ընդհանուր շաբաթական ժամաքանակը չի գերազանում 11 ժամը: Ջրվեժի միջնակարգ դպրոցում կարևորվել է ազգությամբ եզդի սովորողների համար ուսումնական բազայի բարելավման գործընթացը, մասնավորապես՝ յուրաքանչյուր ուստարվա համար պատվիրվել են եզդիերեն դասագրքեր՝ «Այբենարան», «Եզդիերեն լեզու»: Ջրվեժի միջնակարգ դպրոցի եզդիերենի ուսուցիչը պարբերաբար մասնակցել է վերապատրաստման դասընթացների, իսկ 2022 թվականին անցել է կամավոր ատեստավորումը՝ գրանցելով առավելագույն 100% արդյունք: Ջրվեժի միջնակարգ դպրոցում ազգությամբ եզդի սովորողների մասնակցությամբ պարբերաբար անցկացվել են տարբեր միջոցառումներ: 2019 թվականին անցկացվել է միջոցառում՝ նվիրված «Խդրնավիի» ազգային տոնին: 2023 թվականին կազմակերպվել է զոհված զինծառայող Շավո Սամսոնյանի հիշատակին նվիրված միջոցառում: Անկախության օրվան նվիրված տոնին երեխաները այցելել են Նանսենի անվան այգի, Ջանգիր աղայի հուշարձանի մոտ մասնակցել են միջոցառմանը: Պարբերաբար եզդի աշակերտները այցելել են Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, որտեղ բացվել էր ազգային հերոս Ջանգիր աղայի անվան ռազմավարական լսարանը: Ջրվեժի միջնակարգ դպրոցում սովորող եզդի աշակերտները մշտապես իրենց ակտիվ մասնակցությունն են ցուցաբերում համադպրոցական միջոցառումներին:

120. Զովունու Ռ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոցում 2019-2024թթ. ընթացքում յուրաքանչյուր ուսումնական տարի սովորել են մոտավորապես 50 եզդի սովորողներ: Նրանց ուսումնառությունն իրականացվել է իրենց մայրենի լեզվի՝ եզդիերեն խմբակի ծրագրի շրջանակներում: Խմբակի պարապմունքներն իրականացվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի սպորտի նախարարի

կողմից հաստատած ծրագրով: Դպրոցն ապահովված է եզդիերենի դասագրքերով: Խմբակի պարապմունքները կատարվում են հետևյալ ժամաբաշխմամբ. տարրական դպրոց՝ շաբաթական 2 ժամ, միջին դպրոց՝ շաբաթական 2 ժամ: Եզդիերենի ուսուցչուհին 2023 թվականին մասնակցել է ուսուցիչների կամավոր ատեստավորմանը և գրանցել 70% արդյունք: Եզդի սովորողները ակտիվ մասնակցում են դպրոցի աշակերտական խորհրդի գործունեությանը և 2023 թվականին աշակերտական խորհրդի նախագահ է ընտրվել 10-րդ դասարանի եզդի սովորող Աննա Ավդալյանը: Դպրոցում անցկացրել են «Ազգային ծիսակատարություններ» թեմայով միջոցառում, որի ընթացքում աշակերտները ծանոթացել են իրենց ազգային ծեսերին և ավանդույթներին: Անցկացրել են միջոցառում իրենց Նոր տարվա մասին:

121. Նոր Գեղիի N1 միջնակարգ դպրոցում 2019-2024 թվականներին սովորել է տարեկան մոտ 50-70 ազգությամբ եզդի աշակերտներ: Դպրոցում եզդիերենը դասավանդվում է խմբակի միջոցով դեռևս 1995 թվականից: Ուսուցիչ չլինելու պատճառով կարճատև դադար է եղել, սակայն 2016 թվականից ավելի է ամրապնդվել խմբակը, որը ղեկավարում է բարձրագույն կրթությամբ եզդի ուսուցիչ: 2023 թվականին նա մասնակցել է կամավոր ատեստավորմանը և գրանցել 85% արդյունք: Դպրոցում կազմակերպվում են միջոցառումներ, որտեղ ներկայացնում են եզդիների լեզուն, մշակույթը, ազգային ավանդույթները: Դպրոցում սովորող եզդի աշակերտներն ունեն բարձր առաջադիմություն և նրանցից շատերը մասնակցում են առարկայական օլիմպիադաներին: 2023-2024 թթ. ուսումնական տարում աշակերտական խորհրդի նախագահ է ընտրվել եզդի աշակերտ Էդգար Ավդոյանը: Եզդի աշակերտներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերում համայնքում կազմակերպվող միջոցառումներին:

122. Քանաքեռավանի միջնակարգ դպրոցում փոքրամասնության՝ եզդիների ազգային ինքնության, ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման նպատակով դպրոցում անցկացվել են ընթերցանության մրցույթ, ցերեկույթ՝ «Ազգային տոները» խորագրով, որոնց մասնակցել են դպրոցի եզդի աշակերտները: Պարբերաբար հրավիրվում են ծնողական ժողովներ՝ եզդի ծնողների մասնակցությամբ: Ժողովների ընթացքում վեր են հանվում, քննարկվում են նրանց հուզող խնդիրները և քայլեր են ձեռնարկվում դրանց լուծումներ գտնելու ուղղությամբ: Ծնողական և աշակերտական խորհուրդների կազմում ընդգրկված են եզդի ծնողներ և աշակերտներ, ովքեր ակտիվ գործունեություն են ծավալում ազգային փոքրամասնություններին վերաբերող տարաբնույթ հարցերի լուծման գործընթացում: Դպրոցում ձևավորվել են եզդիերենի խմբակներ 1-4-րդ և 5-12-րդ դասարանների սովորողների համար: Տրամադրվել են եզդիերենի դասագրքեր, դասասենյակը և համակարգչային կաբինետը կահավորված են: Ուսուցչին տրամադրվել են մեթոդական և մանկավարժական ձեռնարկներ՝ դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

ՔՐԴԵՐԵՆ

123. 2022 թվականին ձեռք են բերվել հետևյալ դասագրքերը՝ «Քրդերեն այբբենարան»՝ 50, «Քրդերեն» /4-րդ դասարան/՝ 50, «Քրդերեն» /5-րդ դասարան/՝ 50, «Քրդերեն» /6-րդ դասարան/՝ 50:

124. 2023 թ. տպագրվել է. 7-րդ և 8-րդ դասարանների համար «Քրդերեն»՝ համապատասխանաբար՝ 22 և 17 դասագիրք, «Քրդերեն» 9-րդ դասարանի համար՝

18 դասագիրք: «Քրդերեն այբուբեն» 26 հատ, 2-րդ դասարանի համար՝ «Քրդերեն» 25 հատ, «Քրդերենի» 30 դասագիրք նախատեսված 3-5–րդ դասարանի աշակերտների համար:

125. ***<u>ՀՀ Արարատի մարզի</u>*** հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորում է 1 քուրդ աշակերտ:

126. ***<u>Արագածոտնի մարզում</u>*** ազգային փոքրամասնությունների բնակավայրերում գործող 18 դպրոցներում սովորում է 107 քուրդ աշակերտ: Ալագյազի, Ճարճակիսի և Սիփանի միջնակարգ դպրոցներում ուսուցանվում է քրդերեն: Ավշենի, Ջամշլուի հիմնական դպրոցներում, դպրոցական բաղադրիչների հաշվին, միաժամանակ ուսումնասիրվում է քրդերերեն:

127. Ազգային փոքրամասնությունների հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտները ակտիվորեն մասնակցում են դպրոցականների առարկայական օլիմպիադաներին, մարզային «Մենք մեր տանն ենք» մշակութային միջոցառմանը, հանրապետական միջոցառումներին, ազգային տոներին նվիրված մարզային, համայնքային և դպրոցական, ինչպես նաև մարզական միջոցառումներին: Դպրոցներում գործածվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից երաշխավորված և տպագրված ազգային լեզվով դասագրքերը և ապահովվում է համապատասխան լեզվի ուսուցումը՝ պետական միջոցների հաշվին՝ անկախ երեխաների թվից: Համայնքներում՝ բաժանորդագրվում են «Զագրոս» թերթը:

128. Երևանի պետական համալսարանը 2023 թվականին հրատարակել է քրդերենի դասագիրք, որի հեղինակներ են Թերեզա Ամրյանը և Վարդան Ոսկանյանը: Դասագրքի առաջին հատորը բաղկացած է վաթսուն դասից, որոնցում ներկայացվում են մի քանի խոսքի մասեր, սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևը և դասընթացին անհրաժեշտ տեքստեր ու վարժություններ: Դասագիրքը հասցեագրված է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի, ինչպես նաև ուսումնական այլ հաստատություններում և գիտական կենտրոններում քրդերեն ուսումնասիրող արևելագետներին, լեզվաբաններին, իրանական լեզուներով հետաքրքրվող մասնագետներին:

ԱՍՈՐԵՐԵՆ

129. Ասորերեն լեզու և գրականություն առարկային 2019-2023 թվականներին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի սպորտի նախարարության կողմից հաստատված օրինակելի ուսումնական պլանների համաձայն 1-12-րդ դասարաններում հատկացված է եղել շաբաթական 34 դասաժամ: Դասաժամերի բաշխումն ըստ դասարանների կատարվել է նրանց գործող ուսումնական ծրագրերին համապատասխան:

130. 2022 թվականին ձեռք են բերվել հետևյալ դասագրքերը՝ «Խոսիր ասորերեն» (1-ին դասարան)՝ 60, «Գրիր և խոսիր ասորերեն» (1-ին դասարան)՝ 60, Գրիր և խոսիր ասորերեն » (2-րդ դասարան)՝ 60, «Ալլափ-բիթ » (1-րդ դասարան)՝ 60 դասագիրք:

131. Երևանում Ա.Պուշկինի անվ. N 8 հիմնական դպրոցում և Երևանի Ա.Մարգարյանի անվ. N 29 ավագ դպրոցում ասորերենը դասավանդում է որպես հիմնական առարկա:

132. ***<u>Արարատի մարզի</u>*** հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում

է 198 ասորի աշակերտ: Մարզի Դիմիտրովի և Վերն Դվինի ասորական համայնքներում գործում են հանրակրթական միջնակարգ դպրոցներ: Ազգությամբ ասորի երեխաները իրենց կրթությունը ստանում են այդ դպրոցներում գործող ռուսերեն ուսուցման դասարաններում՝ ասորերենի պարտադիր ուսուցմամբ: Ասորերենի ուսուցումը ներառված է ուսումնական պլանում և դասավանդվում է որպես հիմնական առարկա: Ասորի բոլոր երեխաները ապահովված են դասագրքերով և անհրաժեշտ ուսումնական գրականությամբ:

133. ***<u>Արմավիրի մարզի</u>*** ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում են 11 ասորի երեխաներ:

Մարզում գործող 111 հանրակրթական ուսումնական հաստատություններից մեկում գործում է ասորերենի խմբակ:

Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նոր Արտագերս բնակավայրի «Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում դասավանդվում է ասորերեն՝ արտադպրոցական խմբակի ձևով:

134. ***<u>Կոտայքի մարզի</u>*** Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցում ուսուցանվում է ասորերեն խմբակի շրջանակներում: Առկա են ռուսերենով ուսուցմամբ և ասորերենի ուսումնասիրմամբ դասարաններ (1-ից 12-րդ դասարաններ), որտեղ կրթություն են ստանում ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ՝ մասնավորապես ասորիներ:

Կոտայքի մարզպետի 04.03.2020 թ. N78-Ա որոշմամբ Արզնիի միջնակարգ դպրոցն անվանակոչվել է Արզնի գյուղի բնակիչ ԽՍՀՄ հերոս, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանակիր Սերգեյ Աբրահամի Սարխոշևի անվամբ: Ասորական համայնքի կողմից 2023 թվականի սեպտեմբերին դպրոցի 5-րդ և 7-րդ դասարանների սովորողներին տրամադրվել են համապատասխան դասարանների դասագրքեր: Ռուսերենով ուսուցմամբ և ասորերենի ուսումնասիրմամբ դասարաններում կրթությունն իրականցվում է որպես ուսումնական ծրագրի անբաժանելի մաս, և այդ ուսուցումը կազմակերպվում է նույնիսկ աշակերտների սակավ թվի դեպքում: 2019-2023 թվականների ընթացքում դպրոցն ունեցել է ազգությամբ ասորի տասը շրջանավարտ, որից ութը ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհրդի ձևավորման կարգին համապատասխան՝ ազգային փոքրամասնությունների դպրոցներ կամ դասարաններ ունեցող մարզերից խորհրդի կազմում առաջադրվում է մեկ սովորող՝ ազգային փոքրամասնության ներկայացուցիչ: ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհրդի 2023 թվականի կազմում ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցից ընդգրկված է դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի՝ ասորի Զոյա Ավդըշոևան:

2019-2023 թթ. դպրոցում պարբերաբար անցկացվել են տարբեր միջոցառումներ, բաց դասեր, սեմինարներ ասորի սովորողների մասնակցությամբ ասորերենով, մասնավորապես՝ մայրենի լեզվի միջազգային օրվան, ասորական Նոր տարվան (Հաբ-Նիսան, որը 2008 թվականի ապրիլի մեկից հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից) նվիրված միջոցառումներ:

Դպրոցական առօրյայում մեծ է ազգությամբ ասորի սովորողների

ներգրավվածությունը՝ ինչը նպատակ ունեի պահպանելու ազգային մշակույթն ու ավանդույթները:

Արզնի համայնքում գործող «Աթուր» և «Գաբբարա» հասարակական կազմակերպությունները զբաղվում են ասորիների կրթական, մշակութային, սոցիալական իրավունքների պաշտպանության հարցերով, կազմակերպում են ազգային և կրոնական տոներին նվիրված տարաբնույթ միջոցառումներ, որոնց ակտիվ մասնակցություն են ունենում նաև մանկապարտեզի սաները:

ՌՈՒՍԵՐԵՆ

135. Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական դպրոցների ուսումնական պլանով 2-9-րդ դասարաններում «Ռուսաց լեզու» առարկան ընդգրկված է պետական բաղադրիչի ուսումնական առարկաների ցանկում: Ուսուցումն իրականացվում է Հայաստանում հրատարակված դասագրքերով, որտեղ հաշվի են առնվել ազգային դպրոցում ռուսաց լեզվի դասավանդման առանձնահատկությունները: Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ հանրապետության մի շարք դպրոցներում 1999 թվականին բացվել են ռուսերենի խորացված ուսուցմամբ դասարաններ: Այդ դպրոցների համար մշակվել, հաստատվել և հրատարակվել են հատուկ ծրագիր, դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ:
136. Հանրակրթական դպրոցներում Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան աջակցությամբ պարբերաբար կազմակերպվում են տարբեր միջոցառումներ՝ մրցույթներ և փառատոներ: Հանրապետությունում անցկացվող ամենամյա դպրոցականների օլիմպիադաների առարկայացանկում՝ դպրոցական, քաղաքային, մարզային, հանրապետական փուլերում ընդգրկված է նաև ռուսերենը:
137. 2023թ. հունվարի 24-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ամփոփվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի հայտարարած «Ես եմ ռեժիսորը» ֆիլմաստեղծման հանրապետական դպրոցական նախագիծը՝ մոլոկանների և հունական համայնքների մասնակցությամբ:
138. 2023 թ. մայիսի 20-ին Երևանի պետական համալսարանի մեծ դահլիճում տեղի է ունեցել «Հետազոտենք և բացահայտենք աշխարհը» աշակերտական աշխատաժողովի 2-րդ ամփոփիչ միջոցառումը, որին մասնակցում էին մոլոկանները՝ «Климатические изменения» թեմայով հետազոտական աշխատանքով:
139. 2023թ. մայիսի 31-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ամփոփվեց «Վերափոխենք աշխարհը» խորագրով իրականացվող «Մոլորակն ունի իմ ու քո օգնության կարիքը» համապետական աշակերտական նախագիծը: Նախագծին մասնակցում էին մոլոկանների համայնքի ներկայացուցիչները՝ «Մոլորակի հիմնախնդիրները» սոցիալական հոլովակով:
140. ***<u>Արարատի մարզի</u>*** Արարատ, Արտաշատ, Մասիս համայնքների հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում է 27 ռուս աշակերտ: Դպրոցներն ապահովված են համապատասխան դասագրքերով և ուսումնաօժանդակ գրականությամբ:
141. ***<u>Գեղարքունիքի մարզում</u>*** Ազգային փոքրամասնության պատկանող շատ ներկայացուցիչներ տիրապետում են նաև հայերենին: Հաշվի առնելով Սևան և Գավառ

քաղաքներում բնակվող ռուսների քանակը՝ ռուսաց լեզվի դասավանդման և ուսուցման նպատակով Գավառի N 1 և N 4 հիմնական դպրոցներում գործում են ռուսաց լեզվի խորացված ուսուցմամբ դասարաններ, իսկ Սևանի ավագ և N 3 հիմնական դպրոցներում՝ ռուսերենի ուսուցմամբ դասարաններ: Ռուսերենով են հաղորդակցվում նաև էթնիկական փոքրամասնություններին պատկանող շատ մարդիկ, ինչպես օրինակ՝ հրեաները, լեհերը, բելոռուսները, մոլդովացիները, ուկրաինացիները և այլն: Հանրապետությունում անցկացվող ամենամյա դպրոցականների օլիմպիադաների առարկայացանկում՝ դպրոցական, քաղաքային, մարզային, հանրապետական փուլերում ընդգրկված է նաև ռուսները, որին մասնակցում են նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններից ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ:

142. ***<u>Կոտայքի մարզի</u>*** Աբովյան քաղաքի Ն. Վանյանի անվան N 5, Հրազդանի Հ. Պարոնյանի անվան N 12 հիմնական և Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցներում գործում են ռուսերեն խորացված ուսուցման դասարաններ: Դպրոցներն ունեն հատուկ ծրագիր, դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ:

Աբովյանի Ն.Վանյանի անվան N 5 հիմնական դպրոցում օտարերկրյա քաղաքացիների և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար առկա են ռուսերեն ուսուցմամբ դասարաններ, իսկ հայերեն ուսուցմամբ դասարաններում ռուսերենը դասավանդվում է խորացված ուսուցմամբ:

- Կրթության ոլորտում ազգային փոքրամասնությունների և օտարերկրյա քաղաքացիների կրթությունն ու դաստիարակությունն արդյունավետ կազմակերպելու համար իրականացվում են բազմաբնույթ միջոցառումներ: Ուսումնական տարվա ընթացքում ռուսերեն ուսուցմամբ դասարաններում կազմակերպվում են բաց դասեր, միջոցառումներ, ինտեգրված դասեր, նախագծային աշխատանքներ.
- 2022_2023 ուսումնական տարում ռուսերեն ուսուցմամբ 5-րդ դասարանում կազմակերպվել է դասղեկի ժամ-միջոցառում: Աշակերտները մանրամասն ներկայացրել են ինչպես են դիմավորում Ամանորը այլ երկրներում: Կարևորվել է ազգային փոքրամասնությունների կենցաղը, մշակույթը, բանավեճ-քննարկումներ են եղել ռուսերենով, որոնք մասնավորապես նվիրված են եղել վայրի բնության պահպանությանը: Ռուսերեն ուսուցմամբ 2-րդ դասարանում ռուսաց լեզվով կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված Կանանց տոնին:
- Կազմակերպվել են էքսկուրսիաներ Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարան:
- Հետաքրքիր միջոցառումներ են կազմակերպվում «Прощай, Азбука», «А.Пушкин», «Любить Армению по-русски» խորագրերով:
- Դպրոցի տնօրենության խնդրանքին ընդառաջ Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնը (Россотрудничество в Армении) դպրոցին նվիրաբերել է դասագրքեր և աշխատանքային տետրեր՝ բոլոր դասարանների համար:
- Աբովյանի «Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանում» տեղի է ունեցել ռուսերեն ուսուցմամբ 7-րդ դասարանի աշակերտների՝ «Ֆրանսերենը ռուս գրականության մեջ» նախագծային աշխատանքի պաշտպանությունը:
- Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղը և մասնաճյուղին կից Երիցյան վարժարանը կազմակերպել է «Հնարավորությունների

հարթակ» դպրոցականների միջազգային գիտահետազոտական կոնֆերանս, որին իրենց «Французский язык в русской литературе» թեմայով գիտահետազոտական աշխատանքով ներկայացել են դպրոցի ռուսերեն ուսուցմամբ 7-րդ դասարանի աշակերտները:

- Պարի միջազգային օրվան նվիրված՝ սովորողները ազգային պարից զատ ներկայացրել են այլ ազգերի պարեր՝ ուկրաինական, ռուսական, վրացական և այլն: Նպատակն էր՝ պարը ներկայացնել որպես արվեստի միասնական ձև, որը չի ճանաչում քաղաքական, էթնիկ, մշակութային որևէ սահման:
- Դպրոցի և «Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության» թանգարանի միջև կնքվել է համագործակցության հուշագիր:
- Իրականացվել են մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ՝ մասնավորապես Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի ներկայացուցիչների և դպրոցի ռուսերեն ուսուցմամբ 7-9 դասարանների սովորողների մասնագիտական կողմնորոշման նպատակով անցկացրել են դասընթաց՝ հետագա կրթությունը Ռուսաստանի Դաշնությունում, Թաթարստանի Հանրապետությունում շարունակելու համար:
- Նման համագործակցությունը օգտակար է գիտական, մշակութային և կրթական ոլորտներում հայ-ռուսական համագործակցության ամրապնդման համար.
- Ռուսաց լեզվի ուսուցիչները պարբերաբար մասնակցում են վերապատրաստումների, նաև մրցույթների: Ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Տաթևիկ Հակոբյանը XXIII Պուշկինյան միջազգային մրցույթի դափնեկիր է դարձել:
- Դպրոցում բացվել է ռուսաց լեզվի առարկայական դասասենյակ:

Հրազդանի Հ.Պարոնյանի անվան N 12 հիմնական դպրոցում օտարերկրյա քաղաքացիների և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար առկա են ռուսերեն ուսուցմամբ դասարաններ, իսկ հայերեն ուսուցմամբ դասարաններում ռուսերենը դասավանդվում է որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս:

- Ուսումնական տարվա ընթացքում ռուսերեն ուսուցմամբ դասարաններում կազմակերպվում են բաց դասեր, միջոցառումներ, ինտեգրված դասեր, նախագծային աշխատանքներ,
- 2022-2023 ուստարում ռուսերեն ուսուցմամբ 1-4, 5-7, 8-9-րդ և հայերենով ուսուցմամբ 8, 9-րդ դասարաններում կազմակերպվել է միջոցառում նվիրված ազգային տոներին և ավանդույթներին: Աշակերտները մանրամասն ներկայացրին՝ ինչպես են պատրաստվում ,,Масленица,,-ին և եզդիական ազգային տոներին ու մշակույթին՝ կարևորվելով ազգային փոքրամասնությունների կենցաղը, մշակույթը:
- Կազմակերպվել են ռուսերեն բանավեճ-քննարկումներ, որոնք մասնավորապես նվիրված են եղել մայիսյան հաղթանակներին, Հայրենական մեծ պատերազմին:
- Ռուսերեն ուսուցմամբ 5-7-րդ դասարանում կազմակերպվել է ինտեգրված դաս-միջոցառում՝ հայ-ռուս-ղազախ ժողովուրդների բարեկամություն թեմայով:
- Աշակերտական խորհրդի կողմից կազմակերպվել է ֆիլմի դիտում՝ նվիրված Հայաստանում ապրող ազգային փոքրամասնություններին:
- Դպրոցի տնօրինության խնդրանքին ընդառաջ Ռուսաստանի գիտության և

մշակույթի կենտրոնը (Россотрудничество в Армении) դպրոցին նվիրաբերել է դասագրքեր:

- Կազմակերպվել է ներկայացման դիտում Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնում 5-7, 8-9-րդ դասարանների համար:
- Իրականացվել են մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ՝ 8-9 ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար:
- Դպրոցում անցկացվող բոլոր համադպրոցական միջոցառումներում «Գիտելիքի օր», «Ուսուցչի տոն», «Բարության համաշխարհային օր», «Երկնքից երեք խնձոր ընկավ», «Իմ կարդացած գիրքը», «Ուրախ Ամանոր «Ազգային տոներ և ավանդույթներ», «Բարեկենդան», «Սուրբ Սարգիս», «Տյառնընդառաջ», «Ծատատունկ»՝ բնապահպանական միջոցառումներ, որտեղ ընդգրկվում են ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողները:

143. **Լոռու մարզի** *Ալավերդի համայնքում* բնակչության Ազգային փոքրամասնությունները կազմում են համայնքի բնակչության 1.1% -450 ռուս բնակիչ: ՀՀ Լոռու մարզի 4 մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվում է նաև ռուսերեն լեզվով ուսուցում: Ռուսերենով ուսուցմամբ դասարաններ ունեն Վանաձոր քաղաքում՝ 2 դպրոց, Լերմոնտովո համայնքում՝ 1 և Ֆիոլետովո համայնքում՝ 1 դպրոց:
Ֆիոլետովոյի միջնակարգ դպրոցում ներկայում սովորում է 155 աշակերտ, բոլորն էլ մոլոկան: Աշակերտներից սովորում են 10-ը՝ նախակրթարանում: Դպրոցում ուսուցումը իրականացվում է ռուսերենով: Այն եզակի դպրոց է, որտեղ աշակերտները բոլորը էթնիկ ռուսներ՝ մոլոկաններ են: Դասագրքերը ռուսերենով են, իսկ այն դասագրքերը, որոնք չունեն ռուսերենով տպագրություն, թարգմանվում են: Սովորողների, ծնողների հետ թղթաշրջանառությունը իրականացվում է ռուսերենով, անհրաժեշտության դեպքում թարգմանվում են անվճար կրթական ծառայությունների մատուցման պայմանագրերը: Ավարտական և միասնական քննություններին մասնակցող աշակերտների համար բնագիտամաթեմատիկական առարկաների թեստերը թարգմանվում են ռուսերեն: Կրթություն իրականացնելու ընթացքում պահանջվող դիդակտիկ նյութերը նույնպես հասանելի են ռուսաց լեզվով: «ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի Ե. Ուդալցովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում սովորող աշակերտներից 127-ը ռուսներ են, որոնց հետ ևս ուսուցումը կազմակերպվում է ռուսերեն:

144. Լեզվական քաղաքականության ընդլայնման նպատակով *Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի* օտար լեզուների և գրականության ամբիոնը նախատեսում է ստեղծել գիտարշավային խմբեր՝ ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո և Լերմոնտովո գյուղերում բնակվող ռուս-մոլոկանների ավանդական մշակույթի գոյության ուսումնասիրություն և հետազոտություն իրականացնելու նպատակով: Բանահյուսական, ազգագրական և բարբառագիտական գիտական արշավների հիմնական նպատակն է լինելու ավանդական ժողովրդական մշակույթի տեսակների և ձևերի, սովորույթների և ավանդույթների պահպանումը: Նախաձեռնությունը պետք է իրականացվի ավանդական մշակույթի հետազոտողների և գիտարշավային խմբերի անդամների կողմից:

ՀՈՒՆԱՐԵՆ

145. Հունարեն դասավանդվում է Հայաստանի 6 բնակավայրերի (Երևան, Գյումրի, Ստեփանավան, Յաղդան, Նոյեմբերյան, Ալավերդի) հունական համայնքներում, Հայաստանի հունական համայնքների կողմից կազմակերպվող մանկական ճամբարներում: Հունարենի դասավանդումն անվճար է, ուսուցիչները վարձատրվում են Հունաստանի կառավարության կողմից, իսկ ճամբարները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության:
146. Լոռու մարզի Յաղդան գյուղի դպրոցում դասավանդվում է հունարեն: 2024թ. սկզբից Յաղդանի դպրոցում շաբաթ օրերին դասավանդվում է հունարեն և ուսուցանվում հունական երգ: Ուսուցիչները գյուղ են այցելում Ալավերդի քաղաքից: Ուսուցման գործընթացը դպրոցի տնօրինության և Հայաստանի հունական համայնքների միության ուշադրության կենտրոնում է:
147. *Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում* մշտապես խթանվում է ազգային փոքրամասնությունների լեզվի զարգացումը, ինչպես նաև մշակութային կապերի հաստատումը և ամրապնդումը: Համալսարանում գործում է Հունարենի և հունական մշակույթի կենտրոնը, որտեղ ԲՊՀ-ն ապահովում է տվյալ լեզվի ներկայացուցիչների և լեզվակիր դասախոսների ուղղակի մասնակցությունը մշակութային գործունեությանը՝ դրսևորելով կառուցողական մոտեցում՝ տարածաշրջանային կամ ազգային փոքրամասնությունների լեզուների ճանաչումը որպես մշակութային հարստության արտահայտություն ապահովելու համար: Համալսարանը պարբերաբար կազմակերպում է նաև ազգային փոքրամասնությունների պատմությանը, գրականությանը, մշակույթին, ազգային տոներին և այլ նշանակալից իրադարձություններին նվիրված միջոցառումներ, դասախոսություններ և սեմինարներ:
148. ԵՊՀ հունագիտության կենտրոնը կազմակերպում է հունարենի ութամսյա դասընթաց սկսնակների համար: Դասընթացին հնարավորություն ունեն մասնակցելու բոլոր ցանկացողները:
149. Հայաստանի հունական համայնքների միությունը, տարբեր այլ կազմակերպություններ կազմակերպում են հունարենի դասընթացներ բոլոր ցանկացողների համար:

<u>Ազգային փոքրամասնությունների լեզուների առնչվող գործողությունները բարձրագույն կրթության ոլորտում</u>

150. Բոլոր համապատասխան փուլերում ազգային փոքրամասնությունների լեզուների դասավանդումը և ուսուցումն ապահովելու համար Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է շարունակական ծրագրեր, որոնք նպաստում են ազգային փոքրամասնությունների կրթության արդյունավետ կազմակերպմանը: Սակայն ձեռնարկվող քայլերն արդյունավետ կլինեն միայն այն դեպքում, եթե ազգային փոքրամասնություններիներկայացուցիչները ցանկություն հայտնեն օգտվելու ստեղծվող հնարավորություններից:

Խարտիայի Հոդված 9

Դատական մարմիններ.

151. ՀՀ Սահմանադրության 56-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք:

152. ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության հինգերորդ զեկույցը՝ «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների Եվրոպական խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հաստատելու մասին» N 805-L որոշման հաստատված հավելվածի 2-րդ մասի 4-րդ հոդվածով ներկայացվել է դատավարական լեզվի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական կարգավորումները: Հիշյալ օրենսդրական կարգավորումները ենթարկվել են որոշակի փոփոխությունների, մասնավորապես՝

Հայաստանի Հանրապետության *դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի* 12-րդ հոդվածի 1-ի մասը սահմանում է՝

Հայաստանի Հանրապետությունում դատավարության լեզուն հայերենն է.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բոլոր փաստաթղթերը դատարան են ներկայացվում հայերեն կամ հայերեն պատշաճ թարգմանությամբ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Ըստ նույն հոդվածի 3-րդ մասի՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատավարությանը մասնակցելու իր նախընտրած լեզվով, եթե նա ապահովում է հայերեն պատշաճ թարգմանությունը:

Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են դատավարությանը մասնակցել հայերենով:

Համաձայն նույն հոդվածի 5-րդ մասի՝ քրեական գործով հայերենին չտիրապետող մեղադրյալին դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով՝ բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը:

Նույն հոդվածի 6-րդ մասով սահմանվում է՝ վարչական գործով դատավարության մասնակցին, քաղաքացիական գործով՝ գործին մասնակցող անձին, իսկ քրեական գործով՝ տուժողին դատարանը պետական միջոցների հաշվին ապահովում է թարգմանչի ծառայություններով, եթե նա չունի հայերեն հաղորդակցվելու հնարավորություն և ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի թարգմանություն ապահովելու համար:

153. ՀՀ *վարչական* դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

Հայաստանի Հանրապետությունում վարչական դատավարության լեզուն հայերենն է:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատավարական բոլոր փաստաթղթերը ներկայացվում են հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ: Նշված պահանջը չպահպանելու դեպքում դատավարական փաստաթղթերը

դատարանը չի քննարկում կամ չի թույլատրում, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

Ըստ նույն հոդվածի 3-րդ մասի՝ կողմը, նրա ներկայացուցիչը, կողմի նախաձեռնությամբ նշանակված փորձագետը կամ կողմի միջնորդությամբ հրավիրված վկան իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե կողմն ապահովում է հայերեն թարգմանությունը: Դատավորը, կողմերը, վկաները, փորձագետները, ներկայացուցիչներն իրավունք չունեն ստանձնելու թարգմանչի պարտականություններ, անգամ եթե նրանք տիրապետում են թարգմանության համար անհրաժեշտ լեզվին:

Նույն հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ թարգմանիչը նախազգուշացվում է ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, որի վերաբերյալ դատարանը թարգմանչից ստորագրություն է վերցնում:

154. ՀՀ *քաղաքացիական* դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Հայաստանի Հանրապետությունում *քաղաքացիական* դատավարության լեզուն հայերենն է:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գործին մասնակցող անձինք դատավարական բոլոր փաստաթղթերը ներկայացնում են հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ: Նշված պահանջը չպահպանելու դեպքում դատավարական փաստաթղթերը դատարանը չի քննարկում կամ չի թույլատրում, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

Ըստ նույն հոդվածի 3-րդ մասի՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը:

Վերջապես, նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ գործին մասնակցող անձին, նրա նախաձեռնությամբ նշանակված փորձագետին, նրա միջնորդությամբ հրավիրված մասնագետին կամ վկային դատարանը պետական միջոցների հաշվին ապահովում է թարգմանչի ծառայություններով, եթե համապատասխան անձը չի տիրապետում հայերենին, եւ գործին մասնակցող անձն ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի թարգմանություն ապահովելու համար:»:

155. 2020թ. ուժի մեջ մտած ՀՀ նոր քրեական քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է: Հարկ է նշել, որ ի տարբերություն նախկին օրենսգրքի, վարույթի ընթացքում իր նախընտրած լեզվով հանդես եկող անձի վրա դրված չէ հայերեն թարգմանություն ապահովելու պարտավորությունը:

Համաձայն նույն հոդվածի 2-րդ մասի՝ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու սույն օրենսգրքով սահմանված իր բոլոր իրավունքներն այն լեզվով, որին նա տիրապետում է:

Հատկանշական է, որ ըստ նույն հոդվածի 3-րդ մասի՝ վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա

փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

տըիկՄիաժամանակ, հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության *քրեական* դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում, անկախ հանցանքի կատարման վայրից, քրեական գործերով վարույթ իրականացվում է նշված օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ: Հետևաբար, նույնիսկ դատավարության լեզվին՝ հայերենին տիրապետող ազգային փոքրամասնությանը պատկանող անձին, իր ցանկությամբ, հանձնման ենթակա փաստաթղթերի վավերացված պատճենները կարող են տրամադրվել համապատասխան լեզվով, քանի որ տվյալ պարագայում անհրաժեշտ կլինի ղեկավարվել խարտիայի պահանջներով: Ելնելով այս սկզբունքից՝ դատավարության լեզվին տիրապետող ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք նույնպես կարող են պահանջել, որ հանձնման ենթակա փաստաթղթերն իրենց տրամադրվեն համապատասխան լեզվով վավերացված պատճեններով:

156. «*Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին*» օրենքի 27-րդ հոդվածի համաձայն,

1. Վարչական վարույթն իրականացվում, և վարչական ակտն ընդունվում է հայերենով:

2. Հայաստանի Հանրապետությունում - ազգային փոքրամասնությունների լեզուներին տիրապետող անձինք, օրենքով սահմանված կարգով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, վարչական վարույթի իրականացման համար դիմումը և դրան կից փաստաթղթերը կարող են ներկայացնել համապատասխան փոքրամասնության լեզվով: Այդ դեպքում վարչական մարմինը կարող է պահանջել ներկայացնել փաստաթղթերի թարգմանությունները հայերենով:

3. Վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով: Եթե վարույթի մասնակիցները փաստաթղթեր են ներկայացրել այլ լեզվով, ապա վարչական մարմնի պահանջով նրանք պարտավոր են ներկայացնել նաև դրանց՝ օրենքով սահմանված կարգով կատարված հայերեն թարգմանությունները:

4. Վարչական վարույթի իրականացման ընթացքում թույլատրվում է վարույթի մասնակիցների կողմից օտար լեզուների օգտագործումը: Սակայն և այդ անձինք պարտավոր են իրենց ներկայացրած թարգմանչի միջոցով ապահովել հայերեն թարգմանություն, եթե վարչական մարմինն այդպիսի թարգմանություն ապահովելու հնարավորություն չունի:»:

157. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական ակտն ընդունած վարչական մարմինը վարչական ակտի հասցեատիրոջ գրավոր խնդրանքով նրան կարող է տրամադրել նաև վարչական ակտի օտար լեզվով թարգմանված պատճենը, որը պետք է հաստատված լինի համապատասխան վարչական մարմնի պաշտոնական կնիքով:

158. Նույն օրենքի 93-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին վճարումներ տրվում են Հայաստանի Հանրապետության բյուջեից կամ համապատասխան համայնքի բյուջեից՝ կախված այն հանգամանքից, թե որ վարչական մարմինն է հրավիրել այդ անձանց (պետական, թե տեղական ինքնակառավարման մարմին):

Եթե փորձագետին կամ թարգմանչին հրավիրել է վարչական վարույթի որևէ մասնակից, ապահամապատասխան ծախսերը կրում է այդ մասնակիցը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով նախատեսված անձանց համապատասխան վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով, իսկ վարչական վարույթի մասնակիցներից որևէ մեկի կողմից հրավիրված լինելու դեպքում՝ հրավիրողի և հրավիրվողի միջև ձեռք բերված պայմանավորվածությամբ սահմանված կարգով և չափով»:

Խարտիայի Հոդված 10
Վարչական մարմիններ և հասարակական ծառայություններ

159. ՀՀ–ում 4 ազգային փոքրամասնությունները ներկայացված են նաև ՀՀ Ազգային ժողովում.Կնյազ Հասանով(քուրդ),Ալեքսեյ Սանդիկով (ռուս), Ռուսլան Բաքոյան (եզդի), Զեմֆիրա Միրզոևա (ասորի) և Իրինա Գասպարյան (ասորի):
160. 2020 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը հրապարակել է «Նոր կորոնավիրուսի և արտակարգ դրության պայմաններում մարդու իրավունքների վերաբերյալ» ուղեցույցը: Ուղեցույցը ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների խթանում և պաշտպանություն» ծրագրի աջակցությամբ թարգմանվել է նաև երկրում բնակվող ազգային փոքրամասնությունների լեզուներով՝ ռուսերեն, եզդիերեն, քրդերեն, ասորերեն, հնդկերեն նպատակ ունենալով իրենց մայրենի լեզվով ապահովել տեղեկացվածությունը:
161. Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները կարող են դիմում ներկայացնել իրենց լեզվով, իսկ պատասխանը նրանց տրվում է պետական լեզվով, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումատուն նշում է, որ ակնկալում է պատասխանն ստանալ իր կողմից նշված լեզվով:
162. Մարզերում ապրող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն ունեն լայն հնարավորություններ և իրավունք՝ այդ լեզուներով գրավոր կամ բանավոր հայտեր ներկայացնելու տեղական և մարզային իշխանություններին, սակայն անհրաժեշտ է փաստել, որ փոքրամասնությունների ներկայացուցիչները մեծամասամբ չտիրապետելով իրենց էթնիկ գրավոր լեզվին՝ գերադասում են նշված շրջանակների հետ շփումներում օգտագործել պետական լեզուն:
    a. Արագածոտնի մարզի ազգային կազմով գյուղական համայնքներում ավագանու անդամների և համայնքի ղեկավարի պաշտոններում ընդգրկված են նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ, իսկ ազգային փոքրամասնությունների հավաք բնակավայրերում տեղական ինքնակառավարումն իրականացվում է Ալագյազ խոշորացված համայնքապետարանի և ընտրված ավագանու միջոցով:
    b. Արարատի մարզի Վերին Դվին և Դիմիտրով համայնքների ղեկավարներն ասորի են և ցանկության դեպքում գործածում են իրենց մայրենի լեզուն:
    c. Արմավիրի մարզում տվյալ ազգային փոքրամասնությունների լեզվով խոսում են տվյալ փոքրամասնությունների համայնքներում:
    d. Լոռու մարզի Ֆիոլետովոյի և Լերմոնտովոյի համայնքներում օրենքով սահմանված

դեպքերում ժողովների ընթացքում (քննարկումների ժամանակ) գործածվում է ռուսաց լեզուն:

e. Շիրակի մարզերում օրենքով սահմանված դեպքերում ժողովների ընթացքում (քննարկումների ժամանակ) գործածվում է ռուսաց լեզուն: Շիրակի մարզում պետական պաշտոնատար անձինք բավարար չափով տիրապետում են ռուսերենին, կան նաև եզդիերենին, հունարենին որոշակի չափով տիրապետողներ: Փոքրամասնությունների լեզուներին տիրապետող աշխատողներ կան նաև տեղական ինքնակառավարման մարմիններում՝ քաղաքային և գյուղական համայնքների ավագանիներում:

Մյուս մարզերում ազգային փոքրամասնությունների հավաք բնակավայրեր չկան:

Մյուս մարզերում ազգային փոքրամասնությունների լեզուներով դիմումներ չեն ստացվել, սակայն հասցեագրվելու դեպքում, ըստ անհրաժեշտության, կպատասխանվեն տվյալ լեզվով:

Խարտիայի Հոդված 11
Լրատվամիջոցներ

163. 2020 թվականի օգոստոսի 7-ին ուժի մեջ է մտել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքը: «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքն ուժի մեջ մտնելուց հետո «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքն ուժը կորցրած է ճանաչվել:

164. «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «ե» ենթակետի սահմանում է՝

Հանրային հեռարձակողները պարտավոր են մշակել և իրականացնել ծրագրային քաղաքականություն՝ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի և մշակույթի մասին հաղորդումներ հեռարձակելու նպատակով ոչ գիշերային ժամերին ազգային փոքրամասնությունների համար շաբաթական նվազագույնը 30 րոպե Հանրային տեսալսողական հեռարձակողների և 2 ժամ Հանրային լսողական հեռարձակողի եթերով տրամադրել եթերային ժամանակ:

165. Հանրային հեռարձակմամբ և այլ հեռարձակողներով պարբերաբար հեռարձակվում են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կամ նախաձեռնությամբ ազգային փոքրամասնությունների մասին վերլուծական, իրավունքների իրազեկման կամ տեղեկատվական հաղորդումներ՝ հիմնականում հայերեն կամ ռուսերեն: Հեռուստալրագրողների խնդրանքով ազգային փոքրամասնությունների միջոցառումները կամ տոնակատարությունները մեկնաբանելիս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները խոսում են իրենց լեզվով: Հանրապետության մարզերում գործող հեռարձակողները պարբերաբար անդրադառնում են ազգային փոքրամասնությունների կողմից ներկայացվող խնդիրներին:

166. Հայաստանի Հանրային լսողական հեռարձակողները ամեն օր իրականացնում են հեռարձակում ազգային փոքրամասնությունների լեզուներով, մասնավորապես, ասորերեն՝ 15 րոպե, քրդերեն՝ 30 րոպե, եզդիերեն՝ 75 րոպե, հունարեն՝ 15 րոպե: Աշխատանքային օրերին ռուսախոս ազգային փոքրամասնությունների համար հեռարձակվում է լրատվական-վերլուծական հաղորդում՝ 15 րոպե տևողությամբ:

167. Հանրային լսողական հեռարձակողների կայքում գործում են համապատասխան բաժիններ վերոնշյալ բոլոր լեզուներով, որոնց միջոցով ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները կարող են իրենց մայրենի լեզվով տեքստային ձևաչափով հետևել լրահոսին:
168. Եզդիական և ասորական խմբագրությունները ըստ անհրաժեշտության թողարկում են նաև վիդեոարտադրանք՝ նվիրված երկրի և իրենց համայնքների անցուդարձին: Բովանդակությունը տարածվում է խմբագրությունների պաշտոնական սոցիալական էջերի միջոցով:
169. Հանրային լսողական հեռարձակողների կայքում գործում է եզդիական ժողովրդական երաժշտությանը նվիրված շուրջօրյա առցանց ռադիոկայան:
170. Հանրային լսողական հեռարձակողները թվայնացրել և վերականգնել է իր արխիվում պահվող քրդական և եզդիական ժողովրդական երաժշտության նմուշները՝ շուրջ 1000 միավոր: Այդ երաժշտությունը հասանելի է ռադիոյի արխիվի կայքում և շարժական հավելվածի միջոցով:
171. Հայաստանի հանրային տեսալսողական հաղորդումներով «Առաջին ալիք տեսալսողական ծրագրով 2020, 2021, 2023 թթ. նկարահանվել և հեռարձակվել է 3 հաղորդաշար նվիրված Հայաստանում ազգային փոքրամասնություններին՝ «Կողք-կողքի», «Ազգային համեր», «Էթնոգույներ»: «Էթնոգույներ» հաղորդաշարը թարգմանվել և հեռարձակվել է ազգային փոքրամասնությունների լեզուներով:
172. Հանրային հեռարձակողներով «Առավոտ լուսո» հաղորդաշարը պարբերաբար անդրադառնում է Հայաստանի ազգային փոքրամասնությունների սոցիալական ու մշակութային կյանքին:
173. Յուրաքանչյուր շաբաթ օր Հանրային հեռարձակողներով հեռարձակվում է «Եզդիերեն լուրեր հաղորդաշարը», իսկ «Առաջինի լրատվական ալիք» տեսալսողական ծրագրով պարբերաբար լուսաբանվում են ՀՀ ազգային փոքրամասնությունների հիմնական մշակութային իրադարձությունները:
174. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է հեռարձակողների և լսողական հեռարձակողների գործունեությունը:
175. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գործունեության սկզբունքներն են՝ օրինականությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, անաչառությունը, ինքնուրույնությունը, կոլեգիալությունը և հրապարակայնությունը: Օրենքով երաշխավորվում է լսողական և տեսալսողական հաղորդումների ազատ ընտրությունը, արտադրությունը, տարածման իրավունքը: Հեռարձակումների և տեսալսողական հաղորդումների գրաքննությունն արգելվում է:
176. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատ ընդունելու տեսալսողական և լսողական հաղորդումներ և լրացուցիչ տեղեկություն՝ ներառյալ արբանյակային, կաբելային (մալուխային) ցանցերով, անվճար կամ վճարովի, ինչպես ապակոդավորող միջոցներով, այնպես էլ տեսալսողական և լսողական հեռարձակման բաց ցանցերով: Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն իրավասու չէ միջամտելու մասնավոր հեռարձակողների գործունեությանը:
177. Հանրային հեռարձակողները և հանրային լսողական հեռարձակողները օրենքի

համաձայն իրենք են մշակում և իրականացնում ծրագրային քաղաքականությունը և օրենքի համաձայն լսողական, տեսալսողական լսարանին պարտավոր են մատուցել այնպիսի հաղորդաշարեր և հաղորդումների տեսակներ, որոնցում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը:

178. Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարությունն ամեն տարի ֆինանսական միջոցներ է հատկացնում ազգային փոքրամասնությունների մամուլի տպագրությանն օժանդակելու համար: «Պետական աջակցություն ոչ պետական մամուլին» բյուջետային միջոցառման շրջանակում 2019-2023 թվականներին Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարությունն աջակցություն է ցուցաբերել ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող 10 մամուլի հրատարակմանը: Հայաստանի ազգային փոքրամասնությունների մեծ մասը շարունակում է տպագրել հայերեն կամ ռուսերեն մամուլ (երկլեզու, իսկ առանձին դեպքերում՝ եռալեզու) Տես՝ Հավելված 3 Աղյուսակ 1:

Խարտիայի Հոդված 12.
Մշակութային գործունեություն և հնարավորություններ

179. ՀՀ ազգային փոքրամասնությունների կրթական-մշակութային գործունեությանը նպաստելու նպատակով 2019-2023 թթ. տարեկան 20 մլն դրամ է հատկացվել ՀՀ վարչապետին առընթեր Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի անդամ հանդիսացող 11 ազգային համայնքները ներկայացնող կազմակերպություններին, տե՛ս 80-82 կետեր:

180. Հայաստանի ազգային գրադարանում 2019-2022 թթ. առկա է ազգային փոքրամասնությունների լեզուներով գրականություն՝ ռուսերեն շուրջ 1800 միավոր՝ գեղարվեստական, կրոնական, լեզվաբանական, փիլիսոփայական, արվեստին, պատմությանը, բնական գիտություններին վերաբերող գրքեր, քրդերեն - 158 միավոր, հունարեն - 40 միավոր, եզդիերեն - 7 միավոր, պարսկերեն - 5 միավոր, վրացերեն- 8 միավոր, ուկրաիներեն - 3 միավոր դասագրքեր: Ընթերցվում է հիմնականում ռուսերեն (դասագիրք, գեղարվեստական և կրոնական գրականություն, լեզվաբանական, փիլիսոփայական, արվեստին, պատմությանը, բնական գիտություններին վերաբերող):

181. Աշխատանքներ են տարվում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ հրատարակվող ազգային փոքրամասնությունների լեզուներով պարբերականների թվայնացման գործընթացի շարունակականությունը ապահովելու ուղղությամբ: «Հայ մամուլ» շտեմարանում ազգային փոքրամասնությունների հրատարակած բոլոր պարբերականները գրառված են, մեծ մասի թվային տարբերակներն էլ տեղադրված են:

182. Հայաստանի ազգային գրադարանի գրատպության թանգարանում ցուցադրվում է ազգային փոքրամասնությունների մամուլից՝ Հայաստանի ուկրաինական, լեհական, հրեական, քրդական, եզդիական համայնքների պարբերականները:

183. Հ

այաստանի ազգային գրադարանում գրանցված են 251 հնդիկ, 179 ռուս, 141 պարսիկ, 23 քուրդ, 21 արաբ, 21 ամերիկացի, 15 եզդի, 2 ֆիլիպինցի, 1 չինացի, 1 գերմանացի, 1 լեհ ընթերցող:

184. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ազգային փոքրամասնությունների մշակույթների զարգացման նպատակով հատկացված և կահավորված Ազգային փոքրամասնությունների մշակույթի կենտրոնը հնարավորություն է ընձեռում ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցմանը, օգտագործմանն ու զարգացմանը: Այդ տարածքից կարող են օգտվել Հայաստանի բոլոր էթնիկ համայնքները: Ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվով խոսքի գործածումը հեշտացնելու, ազգային փոքրամասնությունների մշակույթի տարածման ու պահպանման նպատակով կազմակերպվում են տարբեր ծրագրեր ու միջոցառումներ՝ համապատասխան լեզուներով:

185. Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը «Արվեստ» հասարակական կազմակերպության հետ իրականացվել է «Դասական վոկալ երաժշտության համերգ» խորագրով ծրագիր՝ Գերմանիայից ժամանած եզդի ու քուրդ մեներգիչների կատարմամբ:

186. «Առնո Բաբաջանյան» համերգասրահում կայացել է «Տանիքը՝ Հայաստան» խորագրով փառատոն, ՀՀ տարածքում գտնվող բոլոր 11 ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ:

187. Կարևորելով ազգային փոքրամասնությունների ընդգրկվածությունն ու մասնակցությունը կրթամշակութային և հասարակական կյանքին ՀՀ Լոռու մարզի, Տաշիր համայնքում, կազմակերպվել են ուսուցողական ծրագրեր գեղանկարչության ուղղվածությամբ:

188. Շարունակական աշխատանքներ են տարվում ազգային փոքրամասնությունների ոչ նյութական մշակութային ժառանգության տարրերի գրանցման և ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության պետական ցանկերում ներառման ուղղությամբ: Մասնավորապես՝

- 2021 թ. «Եզդիների ազգային միություն» հասարակական կազմակերպությունը և ՀՀ-ում բնակվող ասորիների համայնքը մասնակցել են Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության գույքագրման գործընթացին, որի շրջանակում ՀՀ կառավարության 2021 թ. ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 310-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության N 599-Ն որոշմամբ ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը համալրվել է «Եզդիների հարսանեկան ծեսը» և «Ասորիների Նոր տարվա տոնակատարությունը» տարրերով: Գործընթացը շարունակական է:
- 2021թ. «Հայաստանի հունական համայնքների միություն» հասարակական կազմակերպությունը մասնակցել է Հայաստանի Հանրապետության անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության գույքագրման գործընթացին, որի արդյունքում 2021 թ. նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 36-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 1825-Ն որոշմամբ ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության անհապաղ պաշտպանության կարիք ունեցող արժեքների ցանկը համալրվել է «Հայաստանի հույն

ազգաբնակչության պոնտիերեն բարբառ» տարրով:

189. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվերով իրականացվող դրամաշնորհային մշակութային ծրագրերի մրցույթի շրջանակում «Եզդիների ազգային միություն» հասարակական կազմակերպությունը ֆինանսական (700.0 հազ. դրամ) աջակցություն է ստացել եզդիների ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման և տարածման նպատակով մշակութային ծրագրեր իրականացնելու համար:

190. 2019-2020 թթ. «Հանդիպում սարվորների հետ» ծրագրի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ ՀՀ Արագածոտնի մարզի սարվորների հետ, որոնց ընթացքում կազմակերպվել են տոնակատարարություններ, ազգային երաժշտության, երգ ու պարի կատարումներ, գրքերի, թերթերի նվիրաբերություններ: Համանման միջոցառումներին ամեն տարի մասնակցել են 60-70 տարբեր տարիքի և սեռի անձինք, որոնց նպատակը եզդիների ավանդական տոների կենսունակության և շարունակականության ապահովումն է, ազգային սովորույթների, բարքերի, երգ ու պարի, ուտեստի ավանդույթի պահպանումը, սերնդեսերունդ դրանց փոխանցման արժևորումը, նոր սերնդի ինքնագիտակցության մեջ նախնիներից ժառանգված ազգային սովորույթների նկատմամբ հարգանքի և գնահատանքի ամրապնդումն ու կարևորությունը:

191. 2022 թ. ԱՊՀ համագործակցության երկրների կողմից հայտարարված ժողովրդական ստեղծագործության և մշակութային ժառանգության տարվա շրջանակում Շիրակի մարզի Գյումրի քաղաքում տեղի ունեցավ «Գյումրի. վարպետաց քաղաք» փառատոնը, որի նպատակն էր մշակութային մեկ հարթակում միավորել արդի շրջանի ժողովրդական արհեստները, բարձրացնել դրանց ճանաչելիությունը և նպաստել այդ ժառանգությունը կրող ու փոխանցող անհատների ստեղծագործական առաջխաղացմանը: Փառատոնին մասնակցեցին նաև Հայաստանի ազգային փոքրամասնությունների ստեղծագործական խմբերը՝ այդ թվում ներկայացվեցին ռուսական և բելառուսական համայնքների գեղարվեստական աշխատանքները, երգն ու պարը:

192. 2022 թվականի սեպտեմբերին Տավուշի մարզի Դիլիջան համայնքում անցկացվող «Մշակութային վերածնունդ» «Արվեստների և արհեստների» համահայկական փառատոնին Արզնի ասորական և եզդիական համայնքները ներկայացել են իրենց տաղավարներով՝ ցուցադրելով ավանդական ուտեստներ, ազգային երգ ու պար և մշակույթի տարբեր ճյուղեր:

193. Կոտայքի մարզի մշակութային միջոցառումների տարեկան ծրագրի շրջանակներում 2023 թվականի հուլիսի 16-ին Գառնի համայնքի «Գառնի» պատմամշակութային արգելոց թանգարանի տարածքում անցկացվել է «Վարդավառ» ժողովրդական տոնակատարությունը, որին իրենց պարային համարներով մասնակցությունն են բերել նաև Արզնիի ասորական համայնքը:

194. Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքային պուրակում 2023 թվականի օգոստոսի 14-ին կայացել է համերգ՝ նվիրված Բյուրեղավանի 78- ամյակին: ԲՅՈՒՐԱՏՈՆԻ այս տարվա հյուրն էր Արզնի համայնքի Ասորական «ԱԹՈՒՐ» պարային համույթը:

195. Յուրաքանչյուր տարի Կոտայքի մարզի Արզնի համայնքում մեծ շուքով նշվում է **Ասորական համայնքի ուխտը**: Մեկնարկը տրվում է օգոստոսի 27-ից և տևում երկու օր: Տոնի ամենամեծ խորհուրդն ունի օրվա մատաղը: Թեպետ տոնը ասորական է, սակայն, այն միավորում է բոլորին՝ Արզնիում ապրող հայերին, մոլոկաններին և դարձել է համերաշխության յուրօրինակ խորհրդանիշ:

196. Արզնի համայնքում ամեն տարի ապրիլի 1-ին նշվում է Ասորական Նոր տարին՝ «Խաբ-նիսան»-ը, որը համարվում է գարնան, սիրո, ցնծության և երջանկության տոն:
197. 2020-2021 թթ. Հայաստանի Հանրապետությունում համավարակով և 44-օրյա պատերազմով պայմանավորված նախատեսված շատ մշակութային միջոցառումներ չեղարկվել են կամ սակավ են իրականացվել:
198. Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ Երևանում և մարզերում ազգային փոքրամասնությունների բոլոր համայնքների մասնակցությամբ ավանդաբար անցկացվում են գեղարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի ցուցահանդեսներ և երաժշտական փառատոներ: 2020-2023թթ. համապատասխանաբար կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների երաժշտական փառատոներ, համերգներ, ցուցահանդեսներ ու երեխաների համար ուսուցողական գեղանկարչական ծրագրեր:
199. Հայաստանի Հանրապետության բյուջեում ազգային փոքրամասնությունների մշակութային ծրագրերին աջակցության ֆինանսական ծավալները մշակվում են համաձայն համայնքներից ներկայացված հայտերի: Մշակութային հայտերը ներկայացնելու նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարությունն իր պաշտոնական կայքէջում www.escs.am տեղադրում է դրամաշնորհների ներկայացման հայտարարություն, որը բաց է և հնարավորություն է տալիս բոլոր ազգային փոքրամասնություններին ներկայացնելու իրենց ծրագրերը;
200. 2021 թվականին ընդունվել է «Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքը: Օրենքի 16-րդ հոդվածով ամրագրվել է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիլմի տարածումն իրականացվում է վարձութային վկայականի հիման վրա: Վարձութային վկայականի տրամադրման՝ օտարալեզու ֆիլմի հայերեն կրկնօրինակման և (կամ) տեսանելի ու հստակ ենթագրման պահանջը չի տարածվում Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների և կինոփառատոների ու կինոարվեստի այլ միջոցառումների շրջանակում ցուցադրման համար նախատեսված ֆիլմերի վրա:

Խարտիայի Հոդված 13.
Տնտեսական և հասարակական կյանք

201. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող խնամքի հաստատություններում խնամվում է ազգային փոքրամասնություններին պատկանող 28 անձ, այդ թվում՝ 5 երեխա: Նշյալ անձինք տիրապետում են հայերենին և հեշտությամբ հաղորդակցվում են: Առայժմ չի գրանցվել որևէ խնդիր այն առնչությամբ, որ ազգային փոքրամասնության որևէ ներկայացուցիչ խնամքի հաստատություններում ունեցել է հաղորդակցման դժվարություններ լեզվական պատճառներով կամ ծառայություններից պատշաճ օգտվելու հետ կապված խնդիրներ: Բացի այդ, նախարարության ենթակայությամբ գործող խնամքի հաստատություններում աշխատում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք, ովքեր անհրաժեշտության դեպքում կարող են օգնել լուծելու լեզվի հետ կապված խնդիրները:

ԱՂՅՈՒՍԱԿ 1-1

ՀՀ մշտական բնակչությունն ըստ ազգության, սեռի և տարիքի
(ըստ ՀՀ 2022թ. մարդահամարի արդյունքների)

մարդ

Ազգությունը , սեռը (քաղաք, գյուղ)	**Ընդամենը**	**Տարիքը**						
		0 - 9	10 - 19	20 - 29	30 - 39	40 - 49	50 - 59	60 +
ՀՀ	**2 932 731**	**361 688**	**360 425**	**337 562**	**458 656**	**372 818**	**346 767**	**694 815**
Հայ	2 875 697	354 168	353 129	327 922	449 244	365 865	340 799	684 570
Եզդի	31 079	5 011	4 882	3 914	4 539	3 918	3 838	4 977
Ռուս	14 076	1 134	1 104	3 713	3 019	1 498	956	2 652
Ասորի	2 755	348	395	267	455	307	239	744
Քուրդ	1 663	310	263	205	194	259	157	275
Ուկրաինացի	1 005	23	52	333	140	117	119	221
Հնդիկ	593	23	35	331	117	47	34	6
Պարսիկ	434	22	35	102	95	123	43	14
Հույն	364	11	49	22	71	62	28	121
Վրացի	222	0	10	0	52	52	16	92
Այլ	4298	475	430	702	661	527	472	1031
Հրաժարվել են պատասխանել	545	163	41	51	69	43	66	112
Տղամարդ	**1 384 481**	**190 006**	**188 365**	**168 613**	**222 073**	**174 201**	**155 972**	**285 251**
Հայ	1 356 297	185 945	184 358	163 318	216 985	170 855	153 172	281 664
Եզդի	15 895	2 727	2 768	2 039	2 365	1 835	1 921	2 240
Ռուս	6 515	582	590	2 129	1 762	708	330	414
Ասորի	1 396	193	204	155	271	155	124	294
Քուրդ	931	202	159	128	105	139	75	123
Ուկրաինացի	312	11	13	149	36	54	39	10
Հնդիկ	340	8	22	163	86	33	22	6
Պարսիկ	310	8	19	88	42	107	32	14
Հույն	134	11	9	17	33	23	6	35
Վրացի	45	0	0	0	22	8	5	10
Այլ	2 072	233	209	409	323	268	218	412
Հրաժարվել են պատասխանել	234	86	14	18	43	16	28	29
Կին	**1 548 250**	**171 682**	**172 060**	**168 949**	**236 583**	**198 617**	**190 795**	**409 564**

Ազգությունը , սեռը (քաղաք, գյուղ)	**Ընդամենը**	**Տ ա ր ի ք ը**						
		0 - 9	10 - 19	20 - 29	30 - 39	40 - 49	50 - 59	60 +
Հայ	1 519 400	168 223	168 771	164 604	232 259	195 010	187 627	402 906
Եզդի	15 184	2 284	2 114	1 875	2 174	2 083	1 917	2 737
Ռուս	7 561	552	514	1 584	1 257	790	626	2 238
Ասորի	1 359	155	191	112	184	152	115	450
Քուրդ	732	108	104	77	89	120	82	152
Ուկրաինացի	693	12	39	184	104	63	80	211
Հնդիկ	253	15	13	168	31	14	12	0
Պարսիկ	124	14	16	14	53	16	11	0
Հույն	230	0	40	5	38	39	22	86
Վրացի	177	0	10	0	30	44	11	82
Այլ	2 226	242	221	293	338	259	254	619
Հրաժարվել են պատասխանել	311	77	27	33	26	27	38	83
Ք ա ղ ա ք	**1 871 913**	**211 819**	**223 377**	**210 342**	**292 776**	**250 343**	**207 925**	**475 331**
Հայ	1 849 062	209 835	221 456	204 808	288 121	247 535	206 140	471 167
Եզդի	6 622	727	881	805	1 051	950	765	1 443
Ռուս	11 268	854	702	3 428	2 709	1 159	563	1 853
Ասորի	347	30	34	44	69	40	15	115
Քուրդ	229	24	14	45	27	34	31	54
Ուկրաինացի	901	18	41	327	130	112	100	173
Հնդիկ	593	23	35	331	117	47	34	6
Պարսիկ	428	22	35	96	95	123	43	14
Հույն	252	11	31	22	46	54	19	69
Վրացի	205	0	10	0	52	46	16	81
Այլ	1 630	191	107	401	305	210	155	261
Հրաժարվել են պատասխանել	376	84	31	35	54	33	44	95
Գ յ ու ղ	**1 060 818**	**149 869**	**137 048**	**127 220**	**165 880**	**122 475**	**138 842**	**219 484**
Հայ	1 026 635	144 333	131 673	123 114	161 123	118 330	134 659	213 403
Եզդի	24 457	4 284	4 001	3 109	3 488	2 968	3 073	3 534
Ռուս	2 808	280	402	285	310	339	393	799
Ասորի	2 408	318	361	223	386	267	224	629

Ազգությունը , սեռը (քաղաք, գյուղ)	**Ընդամենը**	**Տ ա ր ի ք ը**						
		0 - 9	10 - 19	20 - 29	30 - 39	40 - 49	50 - 59	60 +
Քուրդ	1 434	286	249	160	167	225	126	221
Ուկրաինացի	104	5	11	6	10	5	19	48
Հնդիկ	0	0	0	0	0	0	0	0
Պարսիկ	6	0	0	6	0	0	0	0
Հույն	112	0	18	0	25	8	9	52
Վրացի	17	0	0	0	0	6	0	11
Այլ	2 668	284	323	301	356	317	317	770
Հրաժարվել են պատասխանել	169	79	10	16	15	10	22	17

ԱՂՅՈՒՍԱԿ 1-2

ՀՀ մշտական բնակչությունն ըստ ազգությունների, ք.Երևանի և ՀՀ մարզերի բաշխումով

(ըստ ՀՀ 2022թ. մարդահամարի արդյունքների)

մարդ

Ազգային կազմը	*ՀՀ*	*ք. Երևան*	*Արագա-ծոտն*	*Արա-ռատի*	*Արմա-վիր*	*Գեղար-քունիք*	*Լոռի*	*Կոտայք*	*Շիրակ*	*Սյունիք*	*Վայոց ձոր*	*Տավուշ*
Ընդամենը	**2 932 731**	**1 086 677**	**128 941**	**248 982**	**253 493**	**209 669**	**222805**	**269 883**	**235 484**	**114 488**	**47 369**	**114940**
Հայ	**2 875 697**	1 070 090	120 878	242 824	240 488	209 101	218744	265 237	232 917	113 882	47 216	114320
Եզդի	**31 079**	4 078	5 723	3 984	12 441	134	768	3 079	667	117	42	46
Ռուս	**14 076**	8 712	82	290	305	125	2384	439	1 397	62	40	240
Ասորի	**2 755**	162	6	1 526	161	18	6	847	11	4	4	10
Քուրդ	**1 663**	143	1 262	26	5	99	11	77	12	17	0	11
Ուկրաինացի	**1 005**	722	8	47	23	47	28	35	54	13	11	17
Հնդիկ	**593**	588	5	0	0	0	0	0	0	0	0	0
Պարսիկ	**434**	397	0	0	8	0	6	23	0	0	0	0
Հույն	**364**	136	5	8	4	6	125	19	14	20	0	27
Վրացի	**222**	149	0	16	4	0	33	5	4	6	0	5
Այլ	**4 298**	1 226	921	207	38	66	682	113	376	363	52	254
Հրաժարվել են պատասխանել	**545**	274	51	54	16	73	18	9	32	4	4	10

ՀՀ մշտական բնակչությունն ըստ ազգության, սեռի և մայրենի լեզվի
(ըստ ՀՀ 2022թ. մարդահամարի արդյունքների)

Մարդ

Ազգությունը, սեռը	**Ընդամենը**	Մայրենի լեզուն		Հրաժարվել են պատասխանել
		իր ազգությանն լեզուն	այլ լեզու	
ՀՀ	**2 932 731**	**2 883 756**	**46 846**	**2 129**
Հայ	2 875 697	2 840 631	33 172	1 894
Եզդի	31 079	25 430	5 635	14
Ռուս	14 076	13 146	911	19
Ասորի	2 755	2 213	542	0
Քուրդ	1 663	529	1 129	5
Ուկրաինացի	1 005	673	332	0
Հնդիկ	593	527	36	30
Պարսիկ	434	390	37	7
Հույն	364	88	276	0
Վրացի	222	129	93	0
Այլ	4 298	0	4 298	0
Հրաժարվել են պատասխանել	545	0	385	160
Տղամարդ	**1 384 481**	**1 362 775**	**20 726**	**980**
Հայ	1 356 297	1 341 330	14 089	878
Եզդի	15 895	13 066	2 824	5
Ռուս	6 515	6 136	374	5
Ասորի	1 396	1 098	298	0
Քուրդ	931	285	641	5
Ուկրաինացի	312	222	90	0
Հնդիկ	340	296	22	22
Պարսիկ	310	272	31	7
Հույն	134	37	97	0
Վրացի	45	33	12	0
Այլ	2 072	0	2 072	0
Հրաժարվել են պատասխանել	234	0	176	58
Կին	**1 548 250**	**1 520 981**	**26 120**	**1 149**
Հայ	1 519 400	1 499 301	19 083	1 016
Եզդի	15 184	12 364	2 811	9
Ռուս	7 561	7 010	537	14
Ասորի	1 359	1 115	244	0
Քուրդ	732	244	488	0
Ուկրաինացի	693	451	242	0
Հնդիկ	253	231	14	8
Պարսիկ	124	118	6	0
Հույն	230	51	179	0

Ազգությունը, սեռը	**Ընդամենը**	Մայրենի լեզուն		Հրաժարվել են պատասխանել
		իր ազգության լեզուն	այլ լեզու	
Վրացի	177	96	81	0
Այլ	2 226	0	2 226	0
Հրաժարվել են պատասխանել	311	0	209	102

ԱՂՅՈՒՍԱԿ 1- 4

ՀՀ մշտական բնակչությունն ըստ ազգության և այլ լեզվի, որին ազատ տիրապետում է
(ըստ ՀՀ 2022թ. մարդահամարի արդյունքների)

մարդ

Ազգությունը, սեռը	**Ընդամենը**	Այլ լեզու, որին ազատ տիրապետում է																		Հրաժարվել են պատասխանել
		Հայերեն	Եզդիերեն	Ռուսերեն	Ասորերեն	Հունարեն	Ուկրաիներեն	Քրդերեն	Լեհերեն	Բելառուսերեն	Վրացերեն	Անգլերեն	Ֆրանսերեն	Գերմաներեն	Իսպաներեն	Դարսկերեն	Թուրքերեն	Հինդի	Այլ	Չեն տիրապետում	
ՀՀ	**2 932 731**	**63 889**	**3 450**	**1 893 181**	**2 872**	**77 7**	**1 276**	**56 1**	**28 3**	**5 9**	**4 327**	**143 939**	**4 638**	**3 940**	**67 8**	**2 239**	**66 9**	**34**	**10 964**	**783 286**	**11 669**
Հայ	2 875 697	29 254	1 236	1 887 821	2 631	59 4	821	49 9	27 5	32	4 182	138 128	4 565	3 897	67 0	2 239	66 3	34	8 434	778 373	11 349
Եզդի	31 079	24 723	2 088	2 515	9	0	0	18	0	0	4	241	0	19	0	0	0	0	6	1 426	30
Ռուս	14 076	5 144	23	784	24	81	346	0	8	14	116	4 517	12	18	0	0	0	0	71	2 758	160
Ասորի	2 755	1 808	0	606	181	0	0	0	0	0	0	34	0	0	0	0	0	0	0	126	0
Քուրդ	1 663	1 313	103	137	6	0	0	36	0	0	0	19	0	0	0	0	6	0	0	43	0
Ուկրաինացի	1 005	259	0	413	8	15	109	0	0	0	0	144	0	0	0	0	0	0	6	51	0
Հնդիկ	593	213	0	27	0	0	0	0	0	0	6	290	0	0	0	0	0	0	6	51	0
Պարսիկ	434	214	0	21	0	0	0	0	0	0	0	137	0	0	0	0	0	0	6	36	20
Հույն	364	79	0	150	0	56	0	0	0	0	0	12	0	0	0	0	0	0	0	67	0
Վրացի	222	88	0	68	0	0	0	0	0	0	19	36	0	0	0	0	0	0	0	11	0
Այլ	4 298	598	0	559	7	31	0	8	0	13	0	368	61	6	8	0	0	0	2 428	204	7
Հրաժարվել են պատասխանել	545	196	0	80	6	0	0	0	0	0	0	13	0	0	0	0	0	0	7	140	103

ԱՂՅՈՒՍԱԿ 1-5

ՀՀ մշտական բնակչության բաշխումն ըստ այլ լեզվի, որին ազատ տիրապետում է
(ըստ ՀՀ 2022թ. մարդահամարի արդյունքների)

մարդ

Լեզուներ	*ՀՀ*	*ք.Երևան*	*Արագածոտն*	*Արարատ*	*Արմավիր*	*Գեղարքունիք*	*Լոռի*	*Կոտայք*	*Շիրակ*	*Սյունիք*	*Վայոց Ձոր*	*Տավուշ*
Ընդամենը	**2 932 731**	**1 086 677**	**128 941**	**248 982**	**253 493**	**209 669**	**222 805**	**269 883**	**235 484**	**114 488**	**47 369**	**114 940**

որից՝ փիրապետում են որևէ այլ լեզվի												
Հայերեն	63 889	21 945	7 589	7 609	13 272	1 426	3 407	4 409	2 324	976	375	557
Եզդիերեն	3 450	856	672	346	1 049	32	51	275	156	13	0	0
Ռուսերեն	1 893 181	796 991	67 401	144 793	137 204	112 509	140 310	166 921	160 819	73 864	22 724	69 645
Ասորերեն	2 872	1 381	93	460	164	102	130	223	164	45	27	83
Հունարեն	777	499	23	33	26	0	118	46	19	0	0	13
Ուկրաիներեն	1 276	839	28	27	22	109	12	29	149	8	19	34
Քրդերեն	561	187	46	164	28	59	30	32	11	4	0	0
Լեհերեն	283	189	0	11	10	0	0	63	2	8	0	0
Բելառուսերեն	59	50	0	4	4	0	0	0	1	0	0	0
Վրացերեն	4 327	2 443	100	168	291	39	434	317	418	13	9	95
Անգլերեն	143 939	85 821	3 483	7 341	7 602	4 227	7 508	11 965	6 535	4 857	1 246	3 354
Ֆրանսերեն	4 638	2 796	89	185	106	121	177	379	314	89	21	361
Գերմաներեն	3 940	1 397	89	392	203	463	444	333	238	124	101	156
Իսպաներեն	678	431	17	52	46	15	11	78	9	4	9	6
Պարսկերեն	2 239	1 518	36	132	97	11	57	253	55	50	15	15
Թուրքերեն	669	374	9	35	27	20	41	76	19	19	8	41
Հինդի	34	30	0	0	0	0	0	0	0	0	0	4
Այլ	10 964	4861	1 201	632	485	831	1 001	478	450	524	129	372
Չեն փիրապետում որևէ այլ լեզվի	*783 286*	*160 061*	*47 340*	*85 277*	*91 932*	*88 628*	*68 525*	*82 758*	*62 142*	*33 782*	*22 657*	*40 184*
Հրաժարվել են պատասխանել հարցին	*11 669*	*4 008*	*725*	*1 321*	*925*	*1 077*	*549*	*1 248*	*1 659*	*108*	*29*	*20*

ՀՀ մարզերի և Երևան քաղաքի դպրոցների ցանկ, որտեղ դասավանդվում են ասորերեն, եզդիերեն և քրդերեն

N	*մարզ*	*դպրոց*	*Լեզվի դասավանդման ձևը՝ հիմնական առարկա, խմբակ*		
			եզդիերեն	*քրդերեն*	*ասորերեն*
1.	Արագածոտն	գ. Արևուտի հմ/դ	հիմնական		
2.	Արագածոտն	գ. Կանչի հմ/դ	հիմնական		
3.	Արագածոտն	գ. Թլիկի հմ/դ	հիմնական		
4.	Արագածոտն	գ. Հակոյի հմ/դ	հիմնական		
5.	Արագածոտն	գ. Դդմասարի հմ/դ	հիմնական		
6.	Արագածոտն	գ. Սորիկի հմ/դ	հիմնական		
7.	Արագածոտն	գ. Ալագյազի մ/դ	խմբակ	հիմնական	
8.	Արագածոտն	գ. Սադունցի Ս.Մուրադովի անվ. հմ/դ	հիմնական		
9.	Արագածոտն	Ավշենի Մաքսիմ Խամոյանի անվան հիմնական դպրոց	հիմնական	հիմնական	
10.	Արագածոտն	գ. Ճարճակիսի մ/դ	խմբակ	հիմնական	
11.	Արագածոտն	գ. Միրաքի հմ/դ	հիմնական		
12.	Արագածոտն	գ. Շենկանիի հմ/դ	հիմնական		
13.	Արագածոտն	գ. Ջամշլուի հմ/դ	հիմնական	հիմնական	
14.	Արագածոտն	գ. Ռյա Թազայի մ/դ	հիմնական		
15.	Արագածոտն	Կանիաշիրի հմ/դ	հիմնական		
16.	Արագածոտն	գ. Սիփանի մ/դ	խմբակ	հիմնական	
17.	Արագածոտն	գ. Միջնատունի հմ/դ	հիմնական		
18.	Արագածոտն	գ. Շամիրամի Ուսուբ-բեկի անվ. հմ/դ	հիմնական		
19.	Արարատ	գ. Դիմիտրովի մ/դ			հիմնական
20.	Արարատ	գ. Վ.Դվինի մ/դ			հիմնական
21.	Արմավիր	գ. Լուկաշինի Հ. Ավետիսյանի անվ. մ/դ	խմբակ		
22.	Արմավիր	Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց	հիմնական		
23.	Արմավիր	գ.Երասխահունի մ/դ	խմբակ		
24.	Արմավիր	գ. Արշալույսի մ/դ	խմբակ		
25.	Արմավիր	գ. Քարակերտի հմ.1 մ/դ	խմբակ		

26.	Արմավիր	գ. Դալարիկի մ/դ	խմբակ		
27.	Արմավիր	գ. Զարթոնքի մ/դ	խմբակ		
28.	Արմավիր	գ. Արտաշարի մ/դ	խմբակ		
29.	Արմավիր	գ. Նալբանդյանի մ/դ	խմբակ		
30.	Երևան	ք. Երևանի Ա.Պուշկինի անվ. թիվ 8 հմ/դ			հիմնական
31.	Երևան	ք. Երևանի Ա.Մարգարյանի անվ. թիվ 29 ա/դ			հիմնական
32.	Կոտայք	գ. Արզնիի մ/դ			հիմնական
Ընդամենը՝			***16 հիմնական*** / ***11 խմբակ***	***5 հիմնական***	***5 հիմնական***

ՀՀ պետական բյուջեից 2019-2023 թթ. «Ոչ պետական մամուլի հրատարակում» միջոցառման շրջանակում Ազգային փոքրամասնությունների լեզվով լույս տեսնող մամուլին նախատեսված հատկացումների բաշխումը

Հ/Հ	Պետական աջակցություն ստացող իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտների անվանումները	Թերթի անվանումը	Գումարն ըստ տարիների, հազ. դրամ				
			2019 թ.	2020 թ.	2021 թ.	2022 թ.	2023 թ.
1	«Ռյա-Թազա» թերթի խմբագրություն» ՍՊԸ	«Ռյա-Թազա» *(քրդերեն)*	1200.0	1200.0	0	1000,0	1200,0
2	«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» ՀԿ	«Դնիպրո-Սլավուտիչ» *(հայերեն, ուկրաիներեն)*	1200.0	1200.0	1000,0	1000,0	1200,0
3	«Հայաստանի հրեական համայնքի թերթ» ՀԿ	«Դավիթի վահան» *(ռուսերեն, եբրայերեն)*	1200.0	1200.0	0	1000,0	1200,0
4	Եզդիների ազգային կոմիտե	«Լալըշ» *(հայերեն)*	-	1200.0	0	1000,0	1200,0
5	«Բելառուս» «Երևանի բելառուսների համայնք ՀԿ	«Բելառուս» *(ռուսերեն, բելառուսերեն)*	1200.0	1200.0	1000,0	1000,0	1200,0
6	«Հայաստանի ասորական կազմակերպությունների «Խայադթա» ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն	«Ասիրիսկիե նովոստի» *(ռուսերեն, ասորերեն)*	1200,0	1200,0	1000,0	1000,0	1200,0
7	«Եզդիների ձայն» խմբագրություն» ՍՊԸ	«Էզդիխանա» *(եզդիերեն, հայերեն, ռուսերեն)*	1200,0	1200,0	1000,0	1000,0	1200,0
8	«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» ՀԿ	«Զագրոս» (քրդերեն, հայերեն)	1200,0	1200,0	1000,0	1000,0	1200,0
9	«Երևան քաղաքի «Իլիոս» հույների համայնք» ՀԿ	«Իլիոս» *(ռուսերեն, հայերեն, հունարեն)*	1200,0	1200,0	1000,0	1000,0	1200,0
10	«Իվերիա» վրացական բարեգործական համայնք»	«Իվերիա» *(վրացերեն)*	1200,0	-	-	-	-

	ՀԿ						
	Ընդամենը, հազ. դրամ		**10800,0**	**10800,0**	**6000,0**	**9000,0**	**10800,0**

ԱՂՅՈՒՍԱԿ 3-2

ՀՀ պետական բյուջեից 2019-2023 թթ. «Ազգային փոքրամասնությունների մշակութային միջոցառումների համար ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հատկացումները

Տարեթիվը	2019 թ.	2020 թ.	2021թ.	2022 թ.	2023 թ.
Մշակութային միջոցառումներին հատկացված գումարը, հազ. դրամ	3000.0	3000.0	3.936.0	14,273.6	11,996.6